Զ. ՏԱՐԻ 1531 ԹՒԻ ՀԱՅՈՑ 4381 ՄԵԼԵԿԱՆ 3 ՀԻՆԳՇԱԲԹԻ 9 ՓԵՏՐՈՒԱՐ 1889 (Ն. Տ.) 21 ՓԵՏՐՈՒԱՐ 1889 20 ՃԷՄԱԶԻՎ ԱԽԻՐ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ'ԿԱՏ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ
Գալատիա, Նորատունկեան-խան

دره‌لیه‌ده غلطه‌ده نورادونکیان خاننده آره‌ولك
غزه‌تەسی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Հասցէ	Տարեկան	Գանձ	160
» »	Վեցամսեայ	»	80
» »	Եռամսեայ	»	40
Գաւառաց »	Տարեկան	»	200
» »	Վեցամսեայ	»	100
Օտար երկիրներէ տարեկան	Ֆրանք		56
» »	Վեցամսեայ	»	28

Դուրս զրկուած լրագրաց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան զրկուած Նամակ կամ գրութիւն ետ լարուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 9 ՓԵՏՐՈՒԱՐ, 1889

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՅՍՕՐՎԱՆ ՀՈՎԻՒԸ

Ազգ. Վարչութիւնը Միացեալ Նահանգաց դաղթական Հայոց այցելու հովիւ և յատկապէս Ուսթրի համար Ծայրան հովիւ կարգեց Զարժ. Յովսէփ վարդապետ Սարաճեան, որ քիչ օրէն ճամբայ պիտի ելնէ։ Նաեւ, իբրեւ այցելու մասնաւոր և առժամանակեայ պաշտօնով Եւրոպա կը զրկուի Աբժ. Եղիշէ վարդապետ Դուրեան։ Բահանայ մ'ալ կը զրկուի՝ Կորնթոսի պարանոցին վրայ աշխատող Հայոց հոգեւոր պէտքերը տնօրինելու։

Ստէպ խօսած ենք դաղթական Հայերն ազգային-եկեղեցական հոգեւոր և բարոյական խնամքէ զուրկ չմնալու պէտքին վրայ։ Պատրիարքարանի գլխաւոր պարտաւորութեանց մին է հայ դաղթականութեանց ազգային-եկեղեցական հոգն։ Ամենայն Հայոց Հայրապետութիւնն եւս այս նկատմամբ պարտաւորութիւններէ զերծ չէ, եւ շիտակն ըսելով, Թուրքիայէն դուրս և ազգային կեդրոններէ հեռի բնակող մասնաւոր հայ դաղթականութեանց հոգն առաւելապէս կը պատկանի Ամենայն Հայոց Հայրապետութեան։ Բայց Կ. Պոլիս էջմիածնէն աւելի կեդրոնական դիրք մ'ունի՝ հեռաւոր Հայոց վիճակին վրայ տեղեկութիւն ընդունելու և անոնց պէտքեր տնօրինելու մասին, և քանի որ Կ. Պոլսոյ Պատրիարքն էջմիածնի Հայրապետին փոխանորդն է, միայն թերի թողած գործը միւսն ի դլուխ հանել պարտի։ Առանձինն քննելի խնդիր մ'է թէ լաւագոյն ապագայի անսոյգ յոյսով օտար երկիրներ, մանաւանդ Ամերիկա դիմող Հայք իմաստուն գործ մը կ'ընե՞ն եթէ ոմանք կը յաջողին, շատեր թեղկը լենին, զուրկ դանուելով ինչ ինչ էական պայմաններէ յոյս եւեթ կունայ քիչ շատ նպաստաւոր արդիւնք տալ դաղթականութիւնը։ Բայց մեր դիտած խնդրոյն հետ այս կէտ անմիջական առնչութիւն մը չունի։ Դաղթականութիւնք կան, ու պիտի լենին, և այս իրողութիւնն ընդունելով, պէտք է խորհինք թէ ազգային իշխանութիւնն ի՞նչ կրնայ և ի՞նչ պարտի ընել դաղթական Հայերն Հայ Եկեղեցւոյ և ազգութեան ծոցին մէջ պահելու և պաշտպանելու համար։

Դաղթական Հայք, իրենցմէ բարձր միջավայրի մը մէջ դանուին թէ ստորին միջավայրի մէջ, ակներեւ վտանգի մը մէջ են։ Եւրոպական և Ամերիկեան բարձր քաղաքակրթութեան հոսանքին մէջ Հայոց ազգ. Եկեղեցիէ և քիչ քիչ ալ ազգութենէ օտարանալու փորձութիւնն աւելի եւս մեծ է։ Ուր Հայ Եկեղեցւոյ պաշտօն չի կատարուիր, բնականապէս օտար Եկեղեցի կը դիմին, և այս պարագային ժամանակի խնդիր մ'է որ նոյն օտար Եկեղեցւոյ ոգեղէնը։ Եթէ Հայ Եկեղեցի չկայ ըսելով ուրիշ Եկեղեցի ալ չերթան, կրօնական զդացումին բոլորովին կը կորսուի ժամանակ մը ետքն, որ կարծենք ո՛չ նուազ կորուստ մ'է։ Ազգային լեզուի գործածման սակաւութիւն կամ կատարեալ բացակայութիւն, ազգային կեդրոններու հետ յարաբերութեանց նուազութիւն, ազգային-եկեղեցական մարմնոյ կենդանի ներկայացուցչի անդոյութիւն քիչ քիչ իրենց մէջ կը բերթացնեն ազգային զդացումն ալ, որ կը կարծուի թէ կրօնական զդացումն աւելի երկար կը տեւէ։ Այս տարբեր ճշմարտութեանց համեղելու համար Լեհաստանի Հայոց հին և գրեթէ մոռցուած պատմութիւնն յիշեցնելու պէտք չկայ։ Ահա՛ մեր աչաց առջեւ փճանալու վրայ է Ռումանիոյ պատուական հայ դաղթականութիւնն։ Հայութեան այն ընտիր հատուածն օր ըստ օրէ կ'օտարանայ ազգային-եկեղեցական մարմնէն։ Ազգա մը զոր ամենն ալ կը տեսնենք, և զոր խափանելու համար բան չենք ըներ։ Աղեկաւոր լուրեր, ո՛չ նուազ սրտայոյզ քան Հայաստանի Սողոմն վրայօք երբեմն եկած լուրերը, գրեթէ ամեն ամիս կը հասնին հայ լրագրաց՝ Ռումանիոյ մէկ մէկ քաղաքէն, նկարագրող թէ ի՞նչ պարագայից մէջ Հայք կ'օտարանան Հայ Եկեղեցիէն և կը մոռնան իրենց ազգութիւն, թէ այլ և այլ ռումանական կեդրոններու Հայք այս ազգակործան հոսանքին մէջ ո՛րչափ յառաջացած են, — և սակայն բան մը չենք ըներ այդ վտանգալի զառիվերին վրայ կասեցնելու մեր ռումանարնակ ազգակիցներն ու կրօնակիցները։ Ցարօրինակ տարամարանութեամբ մը կը սպասենք որ Ռումանիոյ Հայերն իրենք խնդրեն Առաջնորդ, այցելու հովիւ, և այլն, մինչ այսպիսի խնդիր մ'ընելու համար պէտք է որ անոնց մէջ վառ լինի ազգային-եկեղեցական զդացումը, բան մը որոյ պակասութիւնն իսկ յառաջ բերած է իրենց այժմեան վիճակին։ Ո՛ր կողմը դառնանք, անարդարանալի է ազգային այս մեծ կեդրոնիս անտարբերութիւնը կամ բան մ'ընելու անկարողութիւնը Ռումանիոյ Հայութեան նկատմամբ։

Դաղթականութիւններն որք մնայուն առաջնորդ մը կամ հովիւ մը չեն կրնար պահել, պէտք է հոդալ այցելու հովիւներու միջոցաւ։ Միշտ նիւթական պէտքերն յառաջ կը բերուին, իբր թէ երբեք հայ եկեղեցական մը այսպիսի պաշտօնով Եւրոպա կամ Ամերիկա ղրկուած և անսթի մնացած լլնի։ Ցեղ տեղ ալ, ուր այսպիսի հովուութիւն մը հիմ դուած է, դիտելի է որ ո՛չ նուազ կարեւոր է այս դաղթական Հայոց հովիւները չորս-հինդ տարին անդամ մը փոխել, որպէս զի ընտելանալով թուլցած բարեպաշտութիւնն և ազգային մարմնոյն կամ եկեղեցւոյն նկատմամբ նուազած զդացումը նոր և փոփոխեալ հովուի ձեռօք միշտ նոր և թարմ պահուի։ Ազգային եկեղեցւոյ այժը միշտ մեծ բազմութեան մէջ նորոգեալ կը մնայ։ Սակաւաւոր թուով Հայոց մէջ, մանաւանդ երբ իրենց բնակիչ քաղաքակիրթ քրիստոնեայ ազգաց հետ կը դանուին ի սերտ յարաբերութեան, ազգային կամ նոր քին հոդեւորական կեանքը միշտ թարմնալու հակամիտութիւն մը կ'ունենայ։ Ակնկալ յառաջ եկած է որ հին ատեն դաղթող մասնական ժողովուրդք ասա անդ իրենց հովիւներով մէկտեղ անհետացեր են, ընկղմելով իրենց դրացի քրիստոնեայ մեծ ժողովրդեան մէջ։ Կրօնքի մէջ վարդապետութենէ զատ սովորութիւնք կամ ծէսեր ալ կան։ Հովիւ մը եթէ ինքն իրեն մնալով և հասատաւոր դիտութիւն ալ ունենալով իւր Եկեղեցւոյ վարդապետութեան վրայ, խղճէ պահել վարդապետութիւնը, դտնէ սովորութեանց կամ ծիսից համար ա՛յնքան անդամներ կը չփուի տեղական սովորութեանց հետ որ կը թուլնայ, և մի առ մի վրայ կուտայ իւր ազգային ու եկեղեցական սովորութիւններն և աւանդութիւններն։ Այս վտանգ տեղի չունենար եթէ այնպիսի հեռաւոր հայ դաղթականութեան մը հոդեւոր հովիւը փոխուի չորս-հինդ տարին անդամ մը, որով այն դաղթականութեան ազգային-հոդեւոր տեսչութիւնը պարբերաբար ազգային մեծ կեդրոնին մէջ մխուելով, նոր կորովով մը կ'ոգեւորի, և նոյն նորոգեալ ոգին կը թափանցէ նաեւ բովանդակ դաղթականութեան մէջ։ Ուր որ է Եկեղեցւոյ կեդրոն, ուր որ է ժողովրդեան կեդրոն, հո՛ն անշուշտ զօրնզագոյնս կը զարնէ ազգային-կրօնական բազկերակն, հո՛ն է սիրտն, ուստից պէտք է պարբերաբար նոր արիւն մը շրջան ընէ մարմնոյն ծայրագոյն անդամոց մէջ։ Այս օրինակաւ եւեթ կրնանք լաւագոյնս բացատրել հեռաւոր հայ դաղթականութեանց հոդեւոր հովիւները պարբերաբար փոփոխելու ընդհանրական, հոգեբանական եւ միանգամայն ազգային անհրաժեշտութիւնը։ Լոկ վարչական տեսակէտով ալ, կրնայ մտածուիլ թէ պարբերաբար փոխելով հայ դաղթականութեանց հոդեւոր հովիւներն, Եւրոպայի և Ամերիկայի յառաջացեալ երկիրները տեսած և աւելի կամ նուազ փորձառութիւն և հմտութիւն ստացած եկեղեցականներու թիւը կ'աւելցնենք, և ազգային վարչական ու եկեղեցական ծառայութեանց համար լաւագոյն պաշտօնեայներ կը պատրաստենք։

Ամերիկայի Հայոց հոդեւոր հովիւը պէտք է մասնաւոր կէտի մը մասդրութիւն ընէ։ Այդ հայ դաղթականաց մէջ կը դանուին շատեր որոց միտքը բողբական սկզբամբ պաշարուած է։ Այս զարմանալի չէ, դիտելով այն միջավայր ուր կը դտնուին երկար ժամանակէ հետէ, ազգային-եկեղեցական խնամքէ և առաջնորդութենէ բոլորովին զուրկ։ Կան ալ որք Թուրքիայէն դաղթած են արդէն բողբական Պատրիարքարանի հովիւն, ըստ մեր համոզման, այս ամենուն վրայ առ հասարակ պէտք է նայի Ազգի և ազգ. Եկեղեցւոյ զառակի աչքով, և ամենքն ալ ժողովի մէկ առաքելական Եկեղեցւոյ հոդեւոր հովանաւորութեան ներքեւ։ Պատրիարքարանի հովիւը լոկ Հայ Եկեղեցին չի ներկայացներ այդ հեռաւոր դաղթականութեանց մէջ։ ուրիշ աւելի ընդարձակ սկզբունք մ'ալ կը ներկայացնէ, և հետեւապէս, սխալ մը կը գործէ եթէ Հայ Եկեղեցւոյ ոգոյ սահմանէն դուրս Հայ չտեսնել ձեւացնէ։ Ամենէն ծայրայեղ բողբականն անդամ, եթէ չէ մոռցած թէ Հայ է, յանձին Պատրիարքարանի հովուին պիտի տեսնէ Ազգին ներկայացուցչին, այն Ազգին որոյ մէկ անդամն է բողբական Հայն եւս։ Զինք կարծեր թէ Ամերիկայի Հայոց հոդեւոր հովուին տրուած հրահանգն այս ոգւոյն, այս ուղղութեան հակառակ տրամադրութիւն մը պարունակէ։ զի Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հօր նման լուսամիտ Պատրիարքի մը օրով, վախ չունինք որ այս և այսպիսիմեծ և էական ճշմարտութիւնք անտես առնուին։ Ուրիշ տեսութեամբ մ'եւս, պէտք է նկատել թէ այսօր ողջամիտ Հայ բողբականաց մէջ դաղտիարաց այնպիսի հոսանք մը կայ որ իրենց կը յուցնէ թէ Հայ բողբականաց ազգային Եկեղեցիէն և ազգային մարմնէն բաժանումը սխալ մ'եղած էր։ Դեռ մեր հրատարակիչներն Ամերիկայէն ընդարձակ նամակ մը, ուսեալ Հայ բողբականի մը կարեւոր ուսումնասիրութիւն, որ անհերքելի ապացոյցներով կը հաստատէր թէ այս բաժանումն իրօք սխալ մ'էր։ Դաղտիարաց այս ընթացքը քաջալերել, Հայ Եկեղեցւոյ ոգին և պատմութիւնը բացատրել, և Հայ բողբական հատուածը տակաւին ազգային-եկեղեցական մեր մարմնոյն դնահատելի աշխատութիւն մ'է, յորում Ամերիկայի Հայ դաղթականաց հոդեւոր հովիւն ևս իւր պատուաբեր բաժինը կարող է ունենալ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՏԱԳՆԱՊ Ի ՖՐԱՆՍԱ.

Փարիզ, 16 փետր. — Կայսրութեան կործանումէն ի վեր 25 րդ անդամ լինելով, նախարարական տագնապի անհանգիստ շրջանին մէջ կը դտնուինք վերսին։ Այս միջոցիս քաղաքական աշխարհը խենթերէ և ապուշներէ եւեթ բաղկացեալ կը թուի։ Սնափառութեան տարօրինակ ցոյցերու հանդիսաւոր կը լլնինք։ Փառամոլ անկարող մարդիկ յառաջ կ'անցնին, ասպարէզը բաց դտնելով։ Կը կարծեն թէ, քանի որ այսինչն եւ այսինչը նախարար եղած են, անկարելի բան չկայ, և հիմա կարդն իրենց եկած է։ Հիմակ երկու տարիէ ի վեր գերակշիռ։ (Ա) անունը որ նախարար կ'ուզեն լլնել, և (Բ) անունը որ ուրիշներուն նախարար լլնելը չեն ուզեր։ Առաջինք տեղեկութիւններ կուտան ձեզ նախարարական կազմութեանց վրայ յորս իրենք ալ կ'երևուին իբրեւ նախարար, և վերջինք կը հերքեն նախարարական ամեն կազմութիւններ յորս իրենց տեղ չէ տրուած, և այսպէս երկու կողմերն ալ կը սխալեցնեն զՀայս։

Բազմաթիւ նախարարական տագնապներէն միոյն մէջ, որոց հանդիսատես եղած եմ, ի Վերսայլ տեսակցեցայ ժամանակին Ազգային Ժողովոյն անչափ երեսփոխաններէն միոյն հետ, և հարցուցի թէ «ի՛նչ վիճակի մէջ է նախարարական տագնապը»։ — «Սա միայն դիտեմ և սա միայն կրնամ ըսել ձեզ թէ, պատասխանեց, ինքզինքս դրի Պ. Կուլառի տրամադրութեան ներքեւ, ու ամեն վայրկեան կը սպասեմ որ դիս հրաւիրէ ի նախարարութիւն։ Ուստի, տուն կ'երթամ իւր պատգամաբերն եկածին պէս ընդունելու։» Ուրիշ առթիւ մը, Քոնքորտի կամուրջին վրայ, ծովակալի մը հանդիպեցայ, որ մեռած է, և ըսի. «Է՛, ի՞նչ կ'ըսէք, նախարարութիւնը կազմուեր է։» — «Մի՛ հաւատաք, ըսաւ, դեռ ինձ հրաւէր չկար նախարարութեան համար» —, և երբեք չհրաւիրուեցայ։ Այսօր կարդ մը երեսփոխաններ իրենց բնակարաններէն չեն հեռանար, որպէս զի նախարարական պատգամաբերը դալուն պէս վազեն երթան ի պաշտօնարան, և ըսեն թէ նախարարութեան մէջ ո՛ր պաշտօնը կ'ընդունին։ Ուրիշ կարդ մը երեսփոխաններ ալ պաշարած են զանոնք որոց կրնայ յանձնուիլ նոր նախարարութիւնը կազմելու գործը։ Լրագրերն ալ երեւակայական նախարարութիւններ կը կազմեն, իրենց ընթերցողաց հետաքրքրութիւնը քիչ շատ յագեցնելու համար։

Երեկ առաւօտ կ'ըսուեր Սակարանին մէջ թէ Պ. Ֆլոքէ պիտի մնայ, փոփոխեալ նախարարութեամբ մը։ Իսմէ՛ն, լսուեցաւ որ նախագահը կանչեր է զՊ. տը Ֆրէյսինէ։ Իսմէ՛ն 5ին Պ. Լը Ռուայէ, Ներակայսի ատենապետը, դնաց խորհուրդ տալ Հանրապետութեան նախագահին, որպէս զի Ներակայսին հաճելի նախարարութիւն մը կազմուի, առանց ի հաշիւ առնելու ընտրութիւնն։ Իսմէ մը հաքն, Երեսփ. Ժողովոյ ատենապետ Պ. Մելինի վրայ կը խօսուէր, որուն պիտի յաջողիլ ելլեր Պ. Ֆլոքէ, և նոր նախարարութիւնը, չափաւորներէ և արմատականներէ բաղկացեալ, ի հարկին Երեսփ. Ժողովը լուծելու իշխանութիւն պիտի ունենայ ելլեր։ Պ. Ֆլոքէ հնարդիտէ կը հանդիսանայ բուն պետարմատական կուսակցութեան, և Պ. Բրիսոնսօ մնայութեան կը սրբուի, իշխանութեան անցնելու պատնէշները մի առ մի կորուսանելով։ Պ. Մելին երեկոյեան գնաց յայտնել Նախագահին թէ չի կրնար նախարարութիւն կազմել։ զի, յետ խորհրդակցութեան իւր բարեկամաց հետ, չի հաստատեր թէ արդի պարագայից մէջ ինչ ծառայութիւն կրնայ մատուցանել երկրին, եթէ իշխանութիւն ընդունի։ Դիշերը Պ. Ռուվիէի վրայ կը խօսուէր։ բայց այս ալ եռաբեն անկարելի համարեցան, և Նորէն խօսք կայ վերակազմեալ Ֆլոքէական նախարարութեան մը։ Ուրիշ զրոյց մ'ալ սա է թէ նախորդ բոլոր նախարարութեանց պետերէն բաղկացեալ չէզոք և ազդեցիկ նախարարութիւն մը պիտի կազմուի, միայն ընթացիկ գործերը վարելու, և Արուեստահանդէսի առթիւ Ֆրանսան օտար ազդաց առջեւ արժանապէս ներկայացնելու պատուոյ։ (Թարգ.)

ՊՈՒԼԳԱՐԱԿԱՆ ՍԻՆՈԴ

Սոֆիայէ կը ծանուցուի թէ Պուլկարաց Եկեղեցին խնդրանայ հակառակ, Ֆերդինանտ Եշխանին կառավարութիւնը թոյլ չէ տուած որ պուլկարական լուծեալ Սինոդը չարուցանէ իւր նախորը ի Ռուսաստան։

ՏԱԳՆԱՊՆ Ի ՍԵՐԲԻԱ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԻՆՔԻ ԱՌԹԻՒ

Փէշթ, 16 փետր. — Կացութիւնն այնչափ կը չխոթի և կը ծանրանայ որ կ'ըսուի թէ Կայսրն ու Կայսրուհին պիտի մեկնին Հունգարիոյ մայրաքաղաքէն, ուր ամիս մը կենալու որոշմամբ եկած էին։ Հանդարտութիւն պահելու և կառավարութեան առաջարկութիւններն ընդունելու համար Կայսեր Երեսփոխանաց Ժողովոյ առանձնատունն և Փէշթայի քաղաքապետին յորդորներ կարդալն յետոյ, թէ՝ խորհրդարանին մէջ և թէ փողոցները տեղի ունեցած բուռն ցոյցեր կը նշանակուին անարդանք մը Վեհապետին դէմ, թէեւ հակառակորդք հաստատմանց ցոյցերը շռայլել չեն մոռնար։

Հունգարիոյ Երեսփ. Ժողովոյն մէջ ընդդիմադիրք սաստկապէս պախարակեցին զՊ. Թիսա՝ թագաւորն այս կուսակցական խնդրոյս միջամտել տալուն համար, մինչ վեհապետին անկ է գերի ի վեր ճալ ամեն խորհրդարանական պայքարէ։ Ընդդիմադիրք բողբեցին այս բարձրագոյն միջամտութեան դէմ։

— Փէշթ, 16 փետր. — Հինդշաբթի երեկոյ, ծայրայեղ ձախակողմեան ակնարկին առջեւ, նոյն կուսակցութենէն երեսփոխան մը, Պ. Լիտ, պատուհանին առջեւ կեցած կատարածներէ ի լուր ուսանողաց և բազմութեան, որք հրապարակը կը ծածկէին։ Ցանկարծ լեռանի չափ ձիաւոր զօրքեր, որք կազմակի փողոցի մը մէջ պահուած էին, յարձակեցան բազմութեան վրայ։ Այս զինուորք սուրերնին չէին մերկացուցած, բայց խոշոր բիրիով զինեալ էին, և կը զարնէին աջ ու ձախ, որու որ ձեռքերնին հասնէր։ Նաև մի մարդիկ թեթեւապէս և մարդ մը ծանրապէս վիրաւորեցան։ Ցեռոյ ոստիկանք մուն գարնէրատուն մը, ուր կ'ըսուէր թէ ցուցարարք համախմբուելու սովորութիւն ունէին, և ոստ-

---

—) 4 (—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

ՖԷՐՆԱՆ

Պարոն տը Պառթէլ հին դերդաստանէ մը սերած էր, տասն-ութերորդ դարուն թոյլ աւանդութեանց մէջ մեծցած։ անտեղակ չէր Մոնժիռու կոմսին յարաբերութեանց, Փոխանակ սրամտելու օրիորդ տը Վալժանսէօզի դէմ,— այս էր պառնուհւոյն ընտանեկան անունը,— ընդհակառակն անհունապէս գոհ մնացած էր անոր անկեղծութենէն, և աքանչելի խօսքերով շնորհակալութիւն յայտնելով նմա այն աղատութեան համար զոր կը շնորհէր իրեն, խոստովանած էր թէ ինքն ալ իւր կողմէ յարաբերութիւն մը ունէր զոր դժուար էր իրեն խզել։ Այսպէս ամէն բան կատարելապէս յարմարած էր, և իրարմէ բաղորովին անջատ երկու խուցեր պատրաստուելով, ծնողք՝ որք բաւական մտահոգութիւն մէջ էին այս միութեան հեռանալու համար՝ հաճացած էին թէ կատարեալ ներդաշնակութիւն կը տիրէր երկու ամուսնոց միջեւ։

Արդ, որովհետեւ Մոնժիռու կոմսին հոգածու խնամքները՝ տը Պառթէլ պառնուհւոյն նկատմամբ՝ ամուսնոյն միայն դժգոհութիւն կրնային պատճառել, և ոչ ոք նշմարած էր որ այս վերջինը դիտողութիւն մը կ'ընէր, ամէն մարդ ալ ամուսնոյն անտարբերութեան հետեւեցաւ և սիրահարաց կողմը բռնեց, վասն զի աշխարհ գիտէ միշտ անցած դարձածը, գաղտնիքներն իրմէ պահելու շահ ունենան կամ ոչ ուրիշները։

Ամուսնութենէն մէկ տարի վերջը տիկին տը Պառթէլ մանչ զաւակ մը ծնաւ։ Պ. տը Պառթէլ իրեն ուղղեալ շնորհաւորութիւններն ընդունեց իբր մարդ մը որ սքանչացած է իւր անուան ժառանգորդ մը ունենալուն համար։ Կնոջը վրայ տարած խնամքը կրկնապատկեց և զաւակը մեծցուցնել տուաւ իւր իսկ աչաց առջեւ, չուզելով բնաւ որ հայրենի տունէն բաժնուի և երթայ գիշերօթիկ վարժարանի մը մէջ կրթանցնել այն ազնուապետական փայլը զոր երիտասարդ մը կը պահէ միշտ տանը մէջ դաստիարակուելով ի ներկայութեան իւր ծնողաց։ Ուստի Մօռիս մեծցած էր բոլորովին մասնաւոր հոգածութեամբ մը, այնպէս ինչպէս կը մեծցուցնէին այն ատենուան տոհմիկները՝ դաստիարակի մը ձեռամբ և ընդ հսկողութեամբ պառն և տիկին տը Պառթէլի։

Վերջապէս, յետ վեչտասանամեայ միութեան որ այնքան ներդաշնակ եղաւ որ ամենափոքր խանգարում մը իսկ չի կրեց և իրը օրինակ կը յիշէին զայն, տիկին տը Պառթէլ՝ ամուսնոյն մահուամբ այրիութեան դրախտը մտաւ, առանց անցած ըլլալու, ինչպէս կ'ըսէին այդ թուականին, ամուսնութեան քաւարանէն։ Ցոյժ պատչամ կերպիւ ողբաց իւր ամուսինն որուն կորստեան վրայ կը ցաւէր այնպէս որպէս կը ցաւին անկեղծ բարեկամի մը կորստեան վրայ։ Այն ժամանակներն էր որ իւր ազգականներէն մին, տիկին տը Նէօլեի որ ի տիզբանէ նախանձած էր տիկին տը Պառթէլի երջանկութեան, թելադրեց նմա Մոնժիռու կոմսին հետ ամուսնանալու գաղափարը, գաղափար զոր ատենակալն այնքան փիլիսոփայաբար մերժած էր։ Այսպէս կացութիւնը նոյն մնացած էր, ի բաց առեալ տարիներու անխուսափելի հարուածներն։ Ապագան, յուսոյ այդ ժամանակներն։ որ ասուր խորհրդներ յառաջ բերած էր, բայց ոչ յուսախաբութիւն։ Պարոն տը Մոնժիռուի մտադրն սպիտակահառն դարձած էին, բայց վարպարդար մը ունէր որ մեծ ճարտարութեամբ կը կը ներկէր զայնս։ Տիկին տը Պառթէլի մարմինը թանձրացած էր, սակայն դերձակուհի մը ունէր որ աքանչելապէս կը հագուեցնէր զինքը։ Ի մի բան իրաւ է թէ իւրաքանչիւր տարի տասներկու ամիս աւելցուցած էր անոնց կեանքին վրայ, բայց երկու սիրահարք եթէ ծերացած էին ուրիշներու համար, նոյնը չէին իրենք իրենց համար, և էականն այս էր։

Շատ չանցած սրտի այս կապերը եւս առաւել ամրապնդուեցան ընտանեկան նոր կապով մը։ Մօռիս քսան-չորս տարեկան եղած էր եւ Բլօդիլա՝ տասն-եօթ։ Երկու երիտասարդ միասին մեծցած լինելով, իրարու նկատմամբ մեծ գորով ցոյց կուտային։ ամուսնութեան խորհուրդ մը ի վաղուց անտի յղացուած էր անոնց միջեւ։ Երբ այդ խորհուրդն յայտնուեցաւ անոնց, ո՛չ մին ո՛չ միւսը ընդդիմութիւն չբերին։ Ցոյժ պատչամ բան մը էր այս ամէն տեսակէտներով, երկու հարստութիւնները կը միացուէին։ Ուսալի օրին մէկը երկուց կողմանց բարեկամք հրաւիրագիր ստացան որ կը ծանուցանէր պարոն Շառլ Մօռիս տը Պառթէլի ամուսնութիւնն ընդ օրիորդ Բլօդիլա տը Մոնժիռուի։

Նորապսակ ամուսնացեալք ուղեւորեցան Իտալիա որոյ գլխաւոր քաղաքներն այցելելոյն։ յետոյ, ի վերադարձին, համառօտապէս ոտ ձմեռն անցուցին տը Վառէն փողոցի տունն, որ պարոն տը Պառթէլէ մնացած էր Մօռիսի, եւ ամառը Ֆոնդընէյ-օ-Ռոզ դղեակն զոր Բլօդիլա ժառանգած էր իւր հօրմէն, Մոնժիռու դերակամսին, կրասեր եղբայր Մոնժիռու կոմսին։

Բ.

Ֆոնթընէյ-օ-Ռոզի դղեկին մէջ մեծցած էր Բլօդիլա։ բայց եթէ մէկը 1835 ին տեսնէր այդ պերճ կալուածն եւ զայն բաղդատէր այն վիճակին հետ յոր կը գտնուէր երեք տարի առաջ, չպիտի ճանչնար զայն, եւ եթէ տը Մոնժիռու դերակոմսը վերակենդանանար, դժուարաւ պիտի դտնէր այդ նորակառոյց ամարանոցին մէջ իւր հինաւուրց բնակարանին հետքը։ Կանոնաւորապէս զարդարուած և տասական արիշներով շրջապատեալ պարտէզն յաջորդած էր լայնատարած մարդադերտն որպէս զի երեւան ելնեն Մոնէրիի աշտարակն որ կը բարձրանայ դաշտին կապոյտ խորերն, ինչպէս եւ դալարագեղ հովտին մէջ սփռեալ սպիտակ տուները։

Տունն ալ ո՛չ նուազ կարեւոր նորոգումներ կրած էր։ այլ եւս դադրած էր երբեմն դղեակ կոչուած չէնքի մը հայրենական տեսարանն ընծայելէ և սիրուն ամարանոցի մը երեւոյթն առած էր, զարդարուած վերնագրեալ մը որուն վրայ կ'ելնէին ծաղկանց կրկին շարքի մը մէջտեղէն, միշտ թարմ և միշտ վերանորոգեալ իրենց ճենապակեայ թագաւորներուն մէջ։ Այդ վերնագրեալին կը տանէր դէպի ներքնատնեակ մը, Վերածնութեան ճաշակով զարդարուած, զինանշանաւոր ապակիներով, գետինը ծածկուած Քորտովայի մոտի դոյն խարտաղ խորտով մը, և գիշերները լուսաւորուած գոթական սիրուն կանթեղով մը, որ երեք ոսկեզօծ շղթայներով կախուած կար ձեղունէն, մինչ այդ կանթեղին իւրաքանչիւր կողմէն կախուած էին երկու նմանօրինակ ընդունարանք, ծաղկանց յատուկ։ Այս ներքնատնեակն երեք ներքին դռներ ունէր որք կը տանէին, առաջինն դէպի ճաշասրահ մը ուսկից անցնելով դահլիճ մը կ'երթայուէր և անտի աշխատութեան խուց մը։ երկրորդը՝ դէպի գնդամուղի սրահն որ ջերմանոցին հետ կը հաղորդակցէր և երրորդը՝ նրբանցք մը որ տան ամբողջ երկայնութենէն կ'անցնէր և զոր ճարտարապետը բաւական լայն թողած էր, որպէս զի ճեմելքի ծառայէր և ուր ընտանեկան պատկերներ կախուած էին։ Այս ճեմելիքն այլ և այլ դռուներ ունէր որք ստորնայարկի սենեակներուն վրայ կը բացուէին։

(Շարունակ.)

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

տիկանութեան պաշտօնարանը քաղեցին տարին զանձն անունք (40 անձինք) որք հոն դարձնուր կը խմէին։ Ընդդիմադիր Երեսփոխանք իրենց պատուհանները տեսան այս եղելութիւնները, և սոսկալիօրէն բողոքեցին։ Ամենէն աւելի զրգռուած էին Կոմս Գաբրիէլ Քարոլյի և ուրիշ քանի մը աղնուականք։ Պ. Լիմ վար իջնելով հարցապնդեց պաշտօնական որ ժողովրդեան վրայ յարձակելու հրամանը տուած էր։ Երեկ, ուրբաթ, Երեսփ. Ժողովոյ մէջ բուռն վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ այս դէպքերու վրայ։

—Փէշ., 16 փետր.—Երեսփոխանք Բաաս, Փորնեի և Փազմանի մասնախմբի մը կազմեցին, որ ձեռք պիտի առնու հակավարչական ցոյցերուն կազմակերպութիւնը։ Մեծ թափոր մը վազը՝ կիւրակի՝ պիտի անցնի Փէշթայի գլխաւոր փողոցներէն, դրօշներ պարզած, նախարարութեան հրաժարականը խնդրելու համար։

(Մտ. Օրէնք.)

Զարն ու Զարուհին յունիսի մէջ պիտի երթան ի Գիլ, ծովեզերեայ գերմանական քաղաքն, ուր փոխադարձ այցելութիւն պիտի տան Գերմանիոյ Կայսեր։

—Հարիւրապետ Վիսման, Կայսերական գերման Պատուիրակ Զանզիպարի, փետր. 15ին Պերլինէ մեկնեցաւ ի Զանզիպար։

—Ռումանն խորհրդարանը միայն մէկ քուէի մեծամասնութեամբ մերժած լինելով նախորդ ազատական նախարարապետ Պ. Պրաթիանոն դատի ենթարկելու առաջարկը, ուսուսէր Պահպանողականք նոյն առաջարկը պիտի մատուցանեն նաև Մերակցային։

—Հայաստանեան նոր պանդիտնէն։—Բրուսիոյ կառավարութեան հրամանաւ, Փոզէնի, Վէրին Սիլեզիոյ և արեւելեան Բրուսիոյ Լեհարնակ դատարաններու մէջ, աղայոց կրօնական նախակրթութիւնն այսուհետեւ ո՛չ թէ ազգային լեհ լեզուաւ, այլ գերմաներէն պիտի առանդուի։

—Միլան Թագաւոր մատիր է եղեր այս գարնան մեծ հանդիսիւ թագադնել Նէլի մեռ Մոնսաթիր կոչուած տեղն, ուր հին սերպ վեհապետք սովոր էին թագադնել։

—Հելլէն կառավարութիւնը Վիեննայի Ունիոն Պանքէն քսան միլիոն ֆր.ի փոխառութիւն մը կնքեց, 100 ին 4 տոկոսով, 65 տարիէն վճարելի, տարեկան 459,750 ֆր.ի հատուցմամբ։ Հելլէն կառավարութիւնն իրական դրամ պիտի ընդունի 13,500,000 ֆր., զոր պիտի գործածէ Անկանութեան պարտքին մեծցուալը վճարելու, և չորս միլիոն ֆր.ի նը-պաստ մը պիտի ընէ Հնդիկական Ընկերութեան։ Ունիոն Պանք երկու միլիոն պարտատոմս պիտի հանէ պարգեւաւոր, հատը տասն ֆր.նոց, ամսական վիճակահանութեամբ։

—Սահմանադրական դժուարութիւնը դեռ չլուծուեցաւ ի Սերպիա։ զի թէեւ Արմատականք վերջին ընտրութեանց մէջ ստուար մեծամասնութիւն շահեցան, բայց թագաւորը չկրնալով հաւանիլ Արմատականաց ներքին և արտաքին քաղաքականութեան ծրագրոյն, Պ. Քրիսթիչի պահպանողական նախարարութիւնը չի ճամբեր։

—Մարքի դեսպանութիւնը Պերլինէ առաջնորդուեցաւ Լեսէն, Բրուսիի գործարանը տեսնելու։ Անոր ցոյց կը տրուին ամէն հաստատութիւնք և կազմակերպութիւնք, որք Գերմանիոյ զօրութեան և բարգաւաճման վրայ մեծ դաղափար կուտան։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Խառն ժողովն երէկ ի նիստ դումարեցաւ ի Խորհրդարան Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պարիարք Հօր։

Ժողովը նկատողութեան առաւ Կարնոյ Դեր. Առաջնորդին հրաժարման խնդիրն և նկատելով որ այդ առթիւ Կարնոյ դաւառական վարչութենէն տեղեկագիր եկած չէ, որոշեց սպասել նոյն տեղեկագրոյ ժամանումն։ Ժողովը վաւերացուց նոյն վիճակին կրօնական ժողովոյ ընտրութիւնը։

Ժողովը Մոկացեան Արժ. Մեսրոպ վարդապետի մէկ գրէն տեղեկացաւ թէ ճամբայ ելած է երթալու համար Վարագայ վանքն, որոյ վանահայրը կարգուած էր ժողովոյ նախորդ որոշմամբ։

Ժողովն զրաղեցաւ նաեւ ամուսնական խնդիրներով։

Երէկ Խառն ժողովոյ դումարումէն առաջ Գարակէօմրիկի յանձնաժողովն ի նիստ դումարեցաւ ի Խորհրդարան Ղալաթիոյ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պարիարք Հօր։ Յանձնաժողովոյ նախագահ Դեր. Օրմանեան Սրբազանի։ Յանձնաժողովը խորհրդակցեցաւ հոգեւորական վարժարանի խնդրոյն և ընդունեց Դեր. Օրմանեան Սրբազանի այդ նպատակաւ պատրաստած ընդարձակ ծրագիրը։

Կը լսենք թէ Ն. Գերապատուութիւն ի մեծոց Արմաշ պիտի երթայ աչքէ անցունելու համար վանքն, որովհետեւ յանձնաժողովը մտադիր է եղեր անդ հաստատել հոգեւորական վարժարանը։

Զմիւռնիոյ պատրիարքական փոխանորդ Արժ. Յովսէփ Մ. վարդապետ Ա.յլազեան շաբաթ օր իր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

Գահիրէի Հայոց Բարեգործական ընկերութիւնն, Յակոբեան Միքայէլ էֆէնտիի միջոցաւ 100 ֆրանք զրկած է հանգուցեալ Տիգրան էֆէնտի Մանասեանի այրւոյն և վեց անչափահաս որբոց ի նը-պաստ բացուած հանգանակութեան։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ակնայ Ապուչէխ գիւղի Վարագայ-Սանուց և ի Դում-Գարու հաստատեալ Ուսումնասիրաց Ընկերութեանց ի նը-պաստ թատերական շքեղ ներկայացում մը պիտի տրուի ի Շահգատէ Պաշի՝ Օսմանկյէ Թատրոնին մէջ՝ յառաջիկայ կիւրակէ գիշեր՝ 12 փետրուար՝ Պ. Մնակեանի գերասանական խմբին կողմէ։

Սոյն ներկայացման յաջողութեան և արդիւնաւորման հսկելու հոգն ստանձնած է կարգադիր Մասնախումբ մը՝ ընդ նախագահութեամբ Մեծ. Տօքթ. Թիրեաքեան էֆէնտիի։

Վերոյիշեալ երկու ընկերութեանց նպատակը լինելով նիւթապէս օգնել տգիտարիկ ուսանողաց, տարակոյս չի կայ թէ մասնախմբին կողմէ ուղղեալ հրաւէրն համակիր ընդունելութիւն պիտի գտնէ կրթասիրաց կողմէ և մանաւանդ Վարագայ Սանուց և Ուսումնասիրաց ընկերութեանց բազմաթիւ բարեկամք և համակրողք պիտի փութան այս առթիւ եւս իրենց օժանդակութիւնն ու քաջալերութիւնը նը-ւիրել։

Ներկայացուելիք խաղն է ԵՐԿՈՒ ՈՐԲՈՒՀԻՆԵՐ թատերգութիւնն ութ արարով, որում պիտի յաջողէ ծիծաղաշարժ զուարճամ, ՍՕՍՊԱՍՊԻԼ։ Գլխաւոր դերակատարք են՝ Պ. Պ. Մանակեան, Սիսակ, Պինոէմէճեան, Մատթէոսեան, Տիկնայք՝ Զ. Հէլբիմեան, Ն. Սամիկիկ, Ա. Պինոէմէճեան և այլք։ Դերերը չափաւոր են։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆԱՑԵՒՈՒԹԻՒՆԵՐ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆՇԱՆՔ

Նիկոսէի գաւառին կառավարիչ անուանուեցաւ Լաղաբիոյ կառավարիչ Ահմէտ Ճէվտէդ փաշա և նոյն յաջորդեց Նիկոսէի կառավարիչ Զիեա պէյ։

— —

Իւլայի երկրորդ ատիճան տրուեցաւ Բ. Դրան իրաւագէտ խորհրդականաց օգնականներէն Նիքոլաքի էֆէնտին։

Սանիչէ միւթէսիմլիկ ատիճան՝ Պոլսոյ նախնական դատարանին պատժական երկրորդ ճիւղին նախագահ Խալիլ պէյի, Բերայի նախնական դատարանին հարցաքննիչ դատաւորներէն Մուսթաֆա Ճէմալ պէյի և Տիգրանակերտի նահանգին մէջթիւտիի Լօմէր Ալի պէյի։

Սանիչէի երկրորդ ատիճան՝ Պոլսոյ նախնական դատարանին ընդհանուր դատախազ Շեմսէտտին պէյի, Բերայի պատժական դատարանին օգնական անդամ Մահրուզբզատէ Ահմէտ Շեֆիզ պէյի, Պէնկալիի թաղապետութեան նախագահ Հաճի Ահմէտ էֆէնտիի, Հռոդոսի թաղապետութեան անդամ Հագիզ էֆէնտիի և Դ. զօրաբանակի սպայակոյտի ճիւղին մարդահամարի առաջին քարտուղար Ահմէտ էֆէնտիի։

Սալիսէի ատիճան՝ Կէլիպոլուի նախնական դատարանին պատժական ճիւղին նախագահ Ճէմալ պէյի, Հերակլեան և Թղթատարական վարչութեան հաստատիչ գանձման դիւանի պաշտօնեայներէն Հաճի Ալի էֆէնտիի, Դոնեսի Իւրիւպ դատաւակին թաղապետութեան նախագահ Լօմէր պէյի և Պէնկալիի դատարանի թղթակցութեանց սենեակին Ահմէտ Համտի էֆէնտիի։

— —

Երկրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Ցունատասանի զօրաբանակաց առողջապահական գործոց նախագահ գնդապետ Տօքթէօր Սոռոնի։

Հինգերորդ կարգի Մէճիտիյէ՝ Պոլսոյի օսմանեան հիւպատոսարանի պաշտօնեայներէն Պ. Թիլիպ Թամբերէի։

— —

Պ. ՅՈՍԹԸՐ

Երեքշաբթի գիշեր ի կայս. պալատ ի պատիւ իտալական դեսպան Պառոն Պասին արուած հայկերգութիւնն յետոյ, Վեհ. Սուլթանը մասնաւոր ուխտդրութիւն մը շնորհեր է առ Պ. Յոսթը, ընդհանուր տնօրէն Օսմ. կայս. Պանքայի, և երկարօրէն խօսակցեր է անոր հետ։ Ն. Վեհափառութիւնն մեծ հաղորդութիւնն ցոյց տուեր է իւր հիւրին նկատմամբ, մասնաւորապէս հետաքրքրուելով նորա առողջութեան մասին, և իւր գոհունակութիւնն յայտներ է վերջնապէս առողջացած տեսնելով զնա իւր վերջին հիւանդութենէն։

— —

ԲԱԹԱՆԹԻ ՏՈՒՐՔԻ

Բաթանթի օրինաց մասին Պ. Նէլիսոֆի ղրկած ծանուցագրոյն ի պատասխանի, Բ. Դուռն իւր ծանուցագրով դիտել կուտայ նախ թէ ռուսական կառավարութիւնն ասկից առաջ մէկ պայման եւեթ դրած էր իւր հաւանութիւնը տալու համար, այն է արհեստապետութեանց ջնջումն, մինչդեռ այսօր ուրիշ երկու պայմաններ եւս կը դնէ, —մասնաւոր կանոնագիր մը օտար հպատակաց համար և ռուսահպատակաց տուդանքին վճարումն։ Առաջին կէտին վրայ, Բ. Դուռը կ'ըսէ թէ կառավարութիւնը շահաւոր կը դատէ չ'ջնջել բնաւ արհեստապետութիւնները, որովհետեւ աւելի դիմելին կ'ըլլայ իրեն «Հնդկանները» դիմելքան իւրաքանչիւր արհեստաւորի կամ բանուորի անհատապէս, և թէ ռուսահպատակները մասնակից չլինելով արհեստապետութեանց, ասոնց դոյութիւնը բնաւ չ'վնասեր իրենց։ Դալով մասնաւոր կանոնագրոյն, Բաթանթի կանոնագիրն արդէն կը պարունակէ յօդուած մը ուսկից կըրնային օգտուիլ բաթանթի տուրք վճարող հպատակներն այն պարագային ուր դժուարութեանց հանդիպին և թէ հետեւաբար հարկ չկայ մասնաւոր կանոնագրի։ Իսկ երրորդ կէտի մասին, այսինքն ռուսահպատակաց տուդանքին վճարման նկատմամբ, ծանուցագիրը կ'ըսէ թէ այս խնդիրը բնաւ վերաբերութիւն չունի Բաթանթի խնդրոյն հետ։ Միայն թէ, Բ. Դուռն այս առթիւն օգուտ կը քաղէ ծանուցանելու համար ռուսական կառավարութեան թէ հրաման տրուած է որպէս զի 50,000 ռուբլոյ դումար մը վճարուի այս ամուսն վերջէն առաջ։ Բայց աստի, կայս. կառավարութիւնն հաճութեամբ կը ծանուցանէ դեսպանին թէ հրաման տուած է Բաթանթի Վարչութեան որ իր խորհրդոյն մէջ ընդունի ռուսահպատակ անդամ մը։

— —

ՀՈԼԱՆՏԱՑՈՒ ԹԱԳԱՒՈՐԸ

Նախընթաց օր, Հոլանտայի թագաւորին Վիլհելմ Դ.ի ծննդեան տարեդարձին առթիւ, կայս. Պալատէն և Բ. Դուռէն պաշտօնական դնայիսի Բերայի հոլանտական դեսպանատունն և դեսպան Պառոն Վան Դեդա Վան Կուտրիանի մատուցին սովորական իրընդակցութիւնները։

— —

ՓՈՔՐ-ԱՍԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Մանդէօի տեղեկութեանց նայելով, Տէջէլ Պանքը վերջապէս համաձայներ է Պ. Պ. Բիրսըլի և Սրնի ներկայած անգլիական խմբակին հետ, Ինկիլրիի երկաթուղւոյն շինութեան համար։

— —

ՌԱՖԹԻԻՆ ՏՈՒՐՔԻ

Պ. Զիֆֆէր և Պ. Օպուռնօ, որք Վիեննա և անկից Բարիզ դնացած էին, այս վերջին քաղաքէն մեկներ են ի Պերլին, ուր ի ժողով պիտի գումարեն Բէժիի գլխաւոր արժէթղթերը խորհրդակցելու համար հարկ եղած տնօրինութեանց վրայ ի մասին Բաֆիզկէի խնդրոյն, զոր Բէժին և Պ. Զիֆֆէր չեն կրցած լուծել կայս. կառավարութեան հետ։

— —

Պ. ԿՐՈՍՀՈԼՋ

Արեւելեան երկաթուղւոյ Ընկերութեան առաջնակարգ ներկայացուցիչ Պ. Կրոսհոլձ, որ Բարիզ և Պերլին դնացած էր, երկուշաբթի օր մայրաքաղաքս վերադարձաւ և տեսակցութիւն մը ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

Կ'իմանանք թէ Պ. Կրոսհոլձ Արեւելեան Երկաթուղեայ ընդհանուր տնօրէնն անուանուեր է փոխանակ հանգուցեալ Պ. Սարպէնի։

Այս լուր անչուշտ ընդհանուր գոհունակութիւն պիտի պատճառէ Կ. Պոլսոյ ամէն կարգի հասարակութեան մէջ. զի յոսմէ հետէ Պ. Կրոսհոլձ պաշտօն կը վարէ ի Կ. Պոլիս, երկաթուղւոյ վարչութեան ամէն ճիւղէ մեծ կանոնաւորութիւն ու բարեկարգութիւն ստացած են։

Իւր բարեհամբաւ բնաւորութեամբ և ընտիր կենցաղավարութեամբ, Պ. Կրոսհոլձ իրաւամբ շահած է ամէն տեսնոց յարգանքն ու հմանրանքն, որոց հետ ի յարաբերութեան գտնուած է իւր կարեւոր պաշտօնին բերմամբ։ Ի մասնաւորի այն հայ պաշտօնեայներն որք կը գտնուին ի ծառայութեան երկաթուղւոյ ընկերութեան, յատուկ պատճառ ունին դոհ լինելու Պ. Կրոսհոլձի հայրախնամ հոգածութենէն։

— —

Ի Բ. ԴՈՒՌՆ

Արտաքին գործոց նախարար Վրսեմ. Սայիտ փաշա կարեւոր խնդրոց կարգադրութեամբ զբաղած լինելով, չկրցաւ ներկայ գտնուիլ Նախարարաց Խորհրդոյ երէկի նստին։

— —

ԾՈՎԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ծովային նախարարութիւնն որոշած է աւելցնել ծովային վարժարանի աշակերտաց թիւը, միացնելովնաև վաճառարարձ նաւուց նաւապետներու յատուկ վարժարանին աշակերտներն։ Այս առթիւ հարկ տեսնուած է ծովային վարժարանին շէնքն ընդարձակել նոր դասարաններու և այլոց շինութեամբ։ Շինութիւնք պիտի սկսին ի մեծոց։

— —

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՅՔ

Բարձր. Մեծ-Եպարքոսն, ըստ որոշման Պետական Խորհրդոյ, հրահանգուղղեց ամէն կողմ որ կառավարական թիւղակաւոր պաշտօնեայք իրենց պաշտօնէն դատ մէկ պաշտօն մը միայն փոխանորդարար վարեն և ոչ աւելի։

— —

ՄԱԽՍՈՒՍԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ըստ տեղեկութեանց Մէրսինէի, Ծովային նախարար Վսեմ. Հասան փաշա հարկ եղած միջոցները ձեռք առնելու վրայ է, որպէս զի Մախսուսէի շոգենաւք եւրոպական մեծաւոր ու հեռաւոր նաւահանգիստներու միջեւ երթեւեկին ուղեւորներու և ապրանաց փոխադրութեան համար։

— —

ԲԱԹՇԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԴՈՎ Ի ՓԱՐԻԶ

Վեհ. Սուլթանին հրամանաւ զինուորական բժշկական վարժարանի ուսուցիչներէն Տօքթէօր Հիւսէին Խալիզի պէյ Փարիզ պիտի երթայ ներկայ գտնուելու համար այս տարի նոյն քաղաքին մէջ գումարելի բժշկական համաժողովին։ Հիւսէին Խալիզի պէյ պիտի բացատրէ իւր անձնական հետազօտութիւններն և պիտի ներկայնէ բժշկական դիտութեան ի թուրքիա ըրած յառաջդիմութեանց ասոիճանը։

— —

ԵՂԵՌՆԱԴԱՏ ԱՏԵԱՆ

Եղեռնադատ ատեանը տասնեհինգ տարուան չղեմպակալ աշխատութեան դատապարտեց Մուսթաֆա անուն մարդ մը որ յԷրզնգէջ Զիեա պէյի ամարանոցին մէջ հողագործ Օսմանն սպաննած էր։

Հալէպի նախկին տէֆթէրտար Հիւսէյին Հիւսնի էֆէնտի երէկ յանկարծամահ եղաւ իւր տան մէջ ի Պոլիս Զէյրէք Եօգուլու։

—Պոզա գաւառին հաշուակալ Մուսթաֆա պէյ երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Մանասթիրի լրագրոյն մէջ կը կարդանք թէ կէօրիճէ գաւառին մէջ 117 տարեկան մարդ մը կ'ապրի եղեր Տէրվիշ Հաճի Սիւլէյման անուն, որ երկուքուկէս տարի առաջ արու զաւակ մը ունեցեր է։ Հաճի Սիւլէյմանի առողջական վիճակը խիստ գոհացուցիչ լինելէ զատ իւր ակռաներն մարգարտի պէս ամրողջ են եղեր։ Այս անձ չորս անգամ ամուսնացեր և վերջին կնոջմէն ունեցեր է այդ արու զաւակն։ Հաճի Սիւլէյման մեծ յոյս ունի եւեր թէ դեռ երկար տարիներ պիտի ապրի։

—Մանասթիրի կուսակալ Բիֆաթ փաշա ամսոյս կին Սէրվիչէ ուղեւորեր է քննական պտոյտ մը կատարելու համար։ Ն. Վսեմութիւն իրեն փոխանորդ կարգեր է նահանգին տէֆթէրտար Մուսթաֆա պէյը։

—Երէկ առաւօտ Նիկոմիդիա ուղեւորող Մախսուսէի շոգենաւը մինչեւ Գեբզէ Պողչէի բացերը գնաց. սակայն հարաւային հողմին սաստկութենէն չկրնալով իւր ճամբան շարունակել նաւահանգստ վերադարձաւ։

ՀԵՌԱԳՐԱՎՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Բարիզ, 20 փետր.

Հանրապետութեան նախագահը կոչեց զՊ. տը Ֆրէսինէ, սակայն սա Պ. Դաուենցի յայտնեց թէ հարկ է զՊ. Մէլլին ունենալ նախարարապետ նոր նախարարութեան մէջ։ Պ. Մէլլին և Պ. տը Ֆրէսինէ այժմ համաձայնութեամբ կ'աշխատին նոր նախարարութիւնը կազմելու համար։

Պէլկրատ, 20 փետր.

Սերպեւսպուլկար առեւտրական դաշնագրոյն բանակցութիւնք խզուեցան։

Աթէնք, 20 փետր.

Զրոյց կը շրջի թէ կրօնական և դատական գործոց նախարարը հրաժարական տուեր են։

Միխայլովիչ մեծ-դուքսն երէկ մեկնեցաւ ի Թուսիա։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 9 փետրվար
Դահէկան

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս 1 տարոյի վրայ (Պանքայէ)	110	7/8
3 » » » (վճռագիր)	110	1/2
3 » Բարիզի » (պանքայէ)	22	85
» » » (վճռագիր)	22	92 1/2

Օսմանեան Գոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Տիրայ. Սէրի	17	10
Վերջին գոցուածքն վերջը »	17	10
Բերայի մէջ »	—	—
Առաւօտեան բացուածքս »	17	13
Այս օրին »	17	14 1/2

ԻՍԹԱԿԳԱՐՔ ՏՈՒԹԻԼԻ

Երէկ երեկոյ	42	5
Այս առաւօտ	42	15
Այս օր	42	22

ԸՆԹԱՑՔ ԱՐՔԷԼԹՈՅ

Փոխառութիւն A. Սէրի	28	20
» B. »	16	20
» C. »	17	14 1/2

ԲԱԺԱՆԵՏԱՄՈՒՔ

Սօսիէթէ ժէնէրալ Անգլ. Լր.	4	19
Փրէտի ֆոնսիէրալ Օսմ. »	9	1
Պանք տը Պօնս » »	7	26
Սօս. Շանժ է վիլէօր » »	4	36
Թրամուէյ » »	472	1/2
Ռուսէլի երկաթուղի Ֆր.	48	50
Օպլիկասիոն տը Բրիօրիթէ »	—	—
Բանսնեթուղթ Լավրիօսի »	114	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ղրշ.	...	100
20 ֆրանքնոց	»	...	88 2
Անգլիական ոսկի	»	...	111 2
Իմպերիալ	»	...	91 15
Քրիմիից	»	...	51 15
Ռուպլի թղթադրամ	»	...	8 47
» արծաթ	»	...	77 20
Մէճ. արծաթ. (տարբ)	»	...	108 26
Վենցնոց	»	...	103 25
Հինգնոց	»	...	108 80
Մեթալիք	»	...	102 20
Թասոֆիյէ	»	...	9 20

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 20 փետրվար ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. գոնսոլիտ	99 1/16
Օսմ. » Սէրի Գ. բացուածքս	15 1/2
» » » գոցուածքս	15 9/16
» » » Ա.	28 1/2
» » » Բ.	16 1/4
» » » Գ.	15 3/8
Օթոման 1871	87 1/4
Փոխառութիւն 1877	99
Պանք Օթոման	11 1/2
Ռուսաստան փոխառ. 1873	102 1/4
Եգիպտական միացեալ (Ռիդիպիլէ	86 1/2
» առանձ. (բրիվիլեժիե)	102 7/8
Տպրա Սանիկ	83 1/4
Տօնանկայ փոխառ. Բաշկիր	102
Հունգարական դարատոմարդ 4 %	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 512

Վիեննա, 20 փետրվար ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 60
Օսմանեան երկաթուղի	23

Բարիզ, 20 փետրվար ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Լանթ 4 1/2 %	194 07 1/2
» » 3 »	84 10
Օսմանեան գոնսոլիտ Սէրի Գ. բացուածքս	15 77 1/2
» » » գոցուածքս	15 82 1/2
» » » Բ.	16 50
» » » Գ.	15 75
Օսմանեան երկաթուղի	48 25
» Լէվանի ժամանեթուղթք	— —
Պանք Օթոման	543 75
Գրէտի Լիոնէ	707 50
» Ֆոնսիէ	1370
Բանսնեսոմ Լոնտի	1342 50
Սուէզի ջրանցք	2250
Ռուսական 5 % 1877 ի	101 7/8
Իտալական Լանթի	95 60
Ոսպանական տարաբերն	75 1/2
Եգիպտական միացեալ	439 37 1/2
Բրիօրիթէ Թիւրք	445
Հունական 5 %	452 50
Զէք Լոնտրայի վրայ	25 32

— —

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 20 փետրվար ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Լանթի 3 %	84 15
Օսմանեան գոնսոլիտ	15 80
Եգիպտական	488 75

ՀԵՌԱԳԻՐ

ԳԱՏԸ-ԳԻՒՂԻ ԹԱՏԵՐՈՆԷՆ

Թերեսա աւելի դիւրին գործ էր Ֆրանսայի պատերազմական պաշտօնատունէն ծրագիրներ գողնալ քան Դատը-գիւղի պարահանդիսի մասնախմբին «Ռենալ»էրուցանին։ Բայց անչուշտ ճշմարիտ անակնկալ մ'ալ այս անգամ նոյն իսկ գաղտնապահ Ցանձնախումբը պիտի ունենայ հրատարակութեան տրուած տեսնելով իւր տասներեք նիստերու մէջ պատրաստած ծրագիրը։ Եւ ի՞նչ ծրագիր, ի՞նչ շռայլ ծրագիր։ Հասկանալի է, հաղարէ երկու հարիւր պարո տոմսակ վաճառուած են, եւ Bel-étage-ի մնացած երեք օթեակներուն համար վեց յաճախորդ կայ որոց եւ ոչ միոյն գրկանք ըրած ըլալու համար Ցանձնախումբն ստիպուած է վիճակ ձգել վեցին մէջ։

Գէշ չէ։ սակայն մի կարծէք որ երբ շռայլ ծրագիր կ'ըսեմ ես ալ իւր երկարութեամբը շռայլ հեռագիր մը կուտամ ձեզ։ (քսան բառն 100 փարայ)։

Բայց անցնիմ ծրագրին։ երկու պարգեւ ամենէն տարօրինակ costume-ին։ սոյն մրցման յայտնի պատրաստուողներ առ այժմ չորս հատ։ մին խոշոր հաւնիթ մը (որոյ վրայ անչուշտ յատուկ commissaire մը պիտի հսկէ իւր ձեւին անմիջական հետեւանքն եղող արարքներէն կասկածելով։) յետոյ «այր—կին» մը որոյ մասին գաղտնապահ մնալ պարտիմ։ երրորդ Ղալաթիոյ աշտարակ մը զոր կրողը օր մը առաջ թատրոն երթալով կը պատրաստուի, որովհետեւ եթէ դուրսէն գայ իւր աշտարակովը թատրոնին դուռները նեղ պիտի գան։ ուրեմն աշտարակը թատրոնին մէջ պիտի չմնալ և հոն պիտի քակուի։ ա՛զգ առ հրդեհէ երկչոտ, որք օտար գիւղերէ կրնան գալ կասկածելով իւրեանց փայտաշէն տուներն զոր ապահոված չըլլան։ Գատը գիւղի աշտարակն այսպէս ազդարար դեր մ'ալ պիտի ունենայ։ Զորրորդն է կ'ըսուի Օթելլօ մը որ իւր հագուստով կ'ուզէ մրցիլ Ադամեանին հետ որ արդէն 5000 ֆրանք կ'արժէ կ'ըսուի։

Բայց կարճեմ.

Ելեկտրական լոյս, Ազգանուէրի Poste-rouge-ը որուն նամակները այս անգամ գրաքննութեան պիտի ենթարկուին նախապէս։ eau de Cologne-ի շատրուան մը։ ձրի փնջիկներ։ բայց կը մոռնայի չինական հարուստ ոչէոռ որ թատերասրահը երկնային կայսրութեան պալատի մը պիտի փոխէ։ համակրելին Պ. Լէվի սառանձնած է այս զարդարանաց հոգն և Պենկեան էֆ. իւր նոր բացած չինական գեղեցիկ մթերանոցին ամենէն ճաշակաւոր առարկաներն յանձնախմբին տրամադրութեան տակ դրած է։

Հիւրամեծարներու խումբը (18 հատ են թուով) Grand-reposի պիտի անդրեւութեան վարկեան մը՝ միակերպ հագուստներով և դիմակաւորեալ սրահը ողողելու համար յանկարծ։

Նուագախումբն այս տարի բացառաբար 16 նուագածուէ բաղկացեալ Պ. Իսմանօի առաջնորդութեամբ պիտի ածէ ըստ նազելուհի տիկնանց ոմանց խնդրանաց, le Diable au bal, la Mascotte, Carmen, Ցիշատակ Եփրատ, քաղաքիկ, հեղինակութիւն Տիկին Համամճեանի, Le jour et la nuit, Sirènes Libesprief, Brune et blonde, Bella boca եւ եւն։

Ընթրիքն հեռաւեալ menuն ունի, զոր կ'օրինակեմ խառն ի խուռն։

Huîtres fraîches, hors d'œuvre, consommé, maillonnaise, rosbeef, galantine, fromage, vins divers, fruits de la saison.

Բայց չա՛ր սատանայ, անօթեցա՛յ, չեմ կրնար շարունակել...

ՕՎԳԻՏԻ

Գատը-գիւղ

ՎԱՌԱՐԱՆԻՍ ՔՈՎ

Հայ աղջիկ մը նկարած պատկերը։ — Տգաւորութիւն։ — Սահակ Պարթեւի տօնին առթիւ։

Հայ աղջիկ մը հին հայու մը պատկերը կը դծագրէ։ Ի՜նչ ահաւոր վսեմութիւն։ Հայ եկեղեցւոյ հայրապետ մին է ամբոխին վրայ նստած։ Հսկայական է ամենայն ինչ։ լայն կրծոց վրայ վսեմ դէմք մը կը բարձրանայ։ վեհ և խորհրդաւոր ճակատ, ալեւորիկ մազեր։ խոշոր բիբեր անքթիթի կը յառին։ պատկառ մտրուք մը լանջաց վրայ փռուած՝ կը կախուի։ Սուրբ գիրքը բռնած է ստուար մատներով, աչքերն հոն կը նային՝ անչուշտ թարգմանութեան ճշդութիւնն ու հայկաբանութիւնը դատելու և քննելու։ կը դիտէ թէ եղնիկ կարող եղա՞ծ է իր վարժապետին հրամանն ի գլուխ հանելու ոսկեղենիկ և հայկական դրչաւ։ կորիւն ի՛նչ բրած է։ Մեսրոպ ո՛ր չափ յաջողած է, Գ.ուսնդ մեղանչա՞ծ է։ և այլն։ Գոհութեան սուրբ ճառագայթ մը ամբողջ դէմքը կ'ողողէ, իբր հաստատիք մեծի հաւատութեան։ Իր աջ կողմը կը թնծած է հայրապետական գաւազանը։ խաչելութեան պատկեր մը կախուած է պատէն վար։ իր փետուր գրիչը կաղամարին մէջ դրուած կը հանդչի։ Ամէն բան հնութիւն կը բուրէ պատկերին մէջ։ Ո՞վ է դա։ — Սահակ Պարթեւ, և նկարիչն՝ օր. Վարսենիկ Մեզուրեան։ Գործն և գործելին, երկուքն ալ օրհնեալ։

Կը յիշեմ ընդ աղօտ որ տեղ մը կարդացած ըլլամ այսպէս թէ հին աւերակներն ու հին մարդոց գերեզմանք մեռց վրայ մի և նոյն տպաւորութիւնը կը գործեն։ երկուքին մէջ ալ կեանքը դադրած կը տեսնուի, և սակայն երկուքն ալ անցեալը կը յիշեցնեն, կենդանի յիշատակներ կը նորոգեն։ Հին պատկերաց համար ալ մի և նոյն բանը կարելի չէ՞ արդեօք ըսել։ ձակտի խորշոմներու մէջ, կամարաձեւ յօնքերու տակ, սպիտակ մազերու ներքեւ վարդենական հնութիւնը կը պահպանուի, անցեալ մեծութիւնը կ'ապրի հոն, և այսպէս մէն մի դիծ, մէն մի թելիկ, կռնիճն ու այտերուն փոթթուածն իսկ ազդեցութիւն կը թողուն մեռց վրայ։ ժամերով յառեալ կը մնաս պատկերին վրայ, կը նայիս, կը յառիս, դարձեալ կը նայիս, դարձեալ կը յառիս։ դարերն հոն եռ եռ կ'երթան։ Պէտք է դառնալ հնութեան։ փոքրիներէն կը չնուռի այն շաղախը որ կը միացնէ նոր սերնդեան սիրտերը նախնեաց հետ։

Մեր եկեղեցւոյն չա՞տ շնորհապարտ ըլլալու ենք մեք։ զի՝ ամէն ամսու և ամէն եղանակի մէջ ոչ միայն սրբանուէր՝ այլ և ազգային և գրական յիշատակաց, վաղեմի ժամանակաց կ'դարձնէ զմեզ։ երէկ ձիւռեր սուրբ մը բերաւ, շբ. Սահակ Պարթեւ կը բերէ, բշ. Ղեւոնդեան քահանաներ և եշ. տոներու սրբազանն ու վեմը։ Ցեսնենք թէ Բիւզանդացի հայերն, որք այսօր կը պարծին իբրև կեդրոն, ի՞նչպէս պիտի տօնեն, շբ. օր դպրոց

ոչ, մեք պիտի տանենք Սահակ Պարթեւը Սամոթիոյ Սահակեան դպրոցի մէջ։ Բ։ օրէն սկսեալ՝ քառակուսի շրջանակի մէջ անցած պաշտօնական թուղթ մը այդ մասին յայտարարութիւն կ'ընէ եկեղեցասէր, դպրոցասէր և մեր լեզուն յարգող ամէն անհատից։ Նոյն օրը դպրոցի սանունք իրենց երդը պիտի կրկնեն։

Մեք Սահակայ ենք սաներ։
Իր յիշատակ չենք մոռցեր, Ան։

Ուղղակի մը պիտի կարդան։ և Ցէր Յակոբեան Վահան վարդապետ պահ մը պիտի տանի զանոնք, իր ճարտար լեզուաւն, անցեալ ժամանակաց, յորս մեր հոգեւորական դասը գրականութիւնն ու Քրիստոսի խաչը հաւասար սիրով կը սեղմէր իր կրծոց վրայ, Ա։ Ն, չարժե՞ր միթէ որ նոյն օր ամէն դպրոց նոյն յիշատակը ոտնէ, Ս։ Պատրիարքը Մայր Եկեղեցւոյ դպրոցն իջնէ։ Հայրիկ Ս։ Խաչի դպրոցն երթայ, Նարպէյ Մաքրուհեան դպրոցը մտնէ։ Սրուանձտեան Արհեստանոցն ելնէ, Օրմանեան կեդրոնականը մտնէ։ Դիմաքսեան ալ տեղ մը պիտի ղրկէի, բայց նա ալ հոս չէ։ Թո՛ղ հոն քարոզէ։ Թող տեսնէ թէ այն ժողովուրդն՝ ուսկից այնչափ կը խրտչէր, ո՞րչափ առաւելութիւններ ունի, տաք սիրտ ունի, սերունդը բաւական լաւ պահած է։ Ի՞նչու չընեն, ի՞նչ կ'արժէ ուրեմն հոգեւորական տեսչութիւնը, քանի զանց կ'առնուի եկեղեցւոյ բարձրագոյն հոգեւորականին ոտնն ու գրականութեան եղական գրիչն ու հայրը։

Այսպէս շատ բաներ գրուած են ընդ վայր։ Փոյթ չէ։ Գրողը մէկ պարտք ունի միայն՝ գրել ու անցնիլ։ Եղաւ օրեր յորս հաւասարաբար աւելի ուռանդ ցոյց կը տրուէր գէթ եկեղեցական և գրական ոտներու։ կամաց կամաց, մանաւանդ այս անտարբերութեան ձեւերը, ոչինչ պիտի ունենանք մեր սրտերուն խորը, —գուցէ յիշատակաց գատարկութիւն։ Առանց պատճառի արդիւնք չկայ կ'ըսենք։ ուրեմն այս ալ իր պատճառն ունեցած է, ըզը պէտք է հետազօտել ու նշանակել։ Տակաւին ցայսօր, եթէ ժամանակ ժամանակ յիշատակում տոներ խմբենք, հոգը մեր մանկանց յանձնուած է։ մանուկները կ'երգեն, մանուկները կը գրեն, մանուկները կը խօսին, և այսպէս ամէն բան կը մանկանայ։ Ասոնք մեր ժողովրդեան առջեւ մանկացուցին ինչ որ մեծ էր եւ վեհագոյն, եկեղեցւոյ նահատակը, դրականութեան դիւցազնը, մեծանձն բարերարը և այլն։ Մեք փափագեցանք որ մեր մանուկները սարէն խօսին, սորէն խօսին։ հինէն գրեն, նորէն գրեն։ Սահակ, Մեսրոպ, Ղեւոնդ, Վարդան, Ցովսէփ մանուկներու շրթանց խաղն ըլլան ու սրբութիւնը պահուի։ Կարելի չէր այս, ինչպէս որ ալ չեղաւ։ ուստի պէտք է որ այսուհեաւ նորոգութիւն մը ըլլայ։ մեծ յիշատակաց վրայ մեծեր խօսին։

Գրագէտ Պատրիարքի օրով դրական անձանց յիշատակները պիտի խառնենք, եղիա՛։ Սահակ Պարթեւ Աշտիշատի մէջ գերեզման ու արձանագիր չունի։ Օտեան ի Բէռ-Վաշէղ չիրիմ չունեցաւ տակաւին, այնպէս չէ՞։

7 Փետր։ 1889 ՀՐԱՆԴ Սկիւտար

ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՍԱՀԱՅՑԵՐԻ ՄԷՋ

Հանգուցեալ Բաքինի Թղթերում գտնվել է, ի միջի այլոց այս գրուածքը, որը հանգուցեալի այրին, տիկին Աննա Մէլիք-Յակոբեան, բարի եղաւ մեզ յանձնելու, «Մշակի» մէջ տպագրելու համար։ Շնորհակալութիւն յայտնելով յարգելի տիկնոջ, ահա տպում ենք յիշեալ հետաքրքիր հատուածը։ Թղթի վրա թիւ չէր դրված, բայց գրուածքի բովանդակութիւնից կարելի է եզրակացնել, որ հանգուցեալը գրել է այդ հատուածը իր կեանքի նախավերջին տարվայ ընթացքում, քանի որ նա այդտեղ խօսում է «Մշակին» տան և չորս տարի աշխատակցելու մասին, և յիշում է իր այն հեղինակութիւնները, որոնք աւարտվեցան մինչայն այդ ժամանակամիջոցում, այն է 1886—87 թուերին։

Խմբ։

Ռուսահայոց նոր գրականութեան մէջ վիպագրութեան առաջին օրինակը տուեց Աբովեանցը։ Նա գրեց մի գիրք միայն, և իւր ետեւից քարշ տուեց հետեւողների մի ամբողջ շարք։ Նա գրեց ռամկական բարբառով, միւսները նոյնպէս գրեցին ռամկական բարբառով։ Նա նկարագրեց գիւղական կեանք, միւսները նոյնպէս գիւղական կեանքի շրջանակի մէջ դրին իրանց նկարները։ Եւ այս բոլորը շատ բնական էր, որովհետեւ գրողները, ասանց բացառութեան, ամենքը գիւղացիներ էին, և գեղջկական կեանքի պատկերները աւելի մօտ էին թէ իրանց սըրտին և թէ երեւակայութեանը։

Պէտք է մի առանձին բախտ, կամ հանգամանքների պատահական դիպուած համարել, որ մեզանում վիպագրութեան առաջին հիմնաքարը դրեց մի ճշմարիտ վարպետ, մի լաւ պատրաստուած մարդ, որ ինքը գիւղացի լինելով, սկսեց գիւղից։ Եւ այսպէս, մեզանում դեռ քառասնամեայ թուականներում, բոլորովին անէջդոկտէբ ստեղծուեցաւ ա՛յն, որ կոչվում է ժողովրդական գրականութիւն, և որը այժմ միայն սկսում է ուրիշների մօտ կատարուել գիտակցաբար։

Բայց վիպագրութիւնը չէր կարող միշտ գեղջկական կեանքի նեղ, սահմանափակ շրջանակի մէջ մնալ, մանաւանդ, որ Աբովեանից յետոյ չը յայտնուեցան զօրեղ տաղանդներ, որ աւելի խոր թափանցէին գիւղական կեանքի բոլոր ծալքերում և նրա մէջ նոր տարբեր, նոր երեւոյթներ գտնելով, աւելի հեռաւորքիր դարձնէին իրանց աշխատութիւնները։ Թողեալ այդ, Աբովեանի հետեւողները՝ Աբովեանի անշնորհ աշակերտներ եղան։ Դրանց համար հայկական վէպ նշանակում էր ա՛յն, ինչ որ գիւղ։ հային է վերաբերում, առանց մտածելու, որ հայը իր կեանքում չփիսում է և օտար ազգերի հետ, որոնք նրա գըբացիներն են, և որոնք նրա հետ միասին բաժանում են կեանքի միեւնոյն հանգամանքները։ Աբովեանը իւր գրքի մէջ տեղ տուաց օտարազգիներին, բայց նրա հետեւողները ոչ՝ սէր-քար մերժեցին նրանց։

Հայկական վէպ դրանց համար նշանակում էր, որ անպատճառ պէտք է ներկայ լինէր գիւղի տէր-տէրը, գիւղի տանուտէրը, գիւղի խալիֆան, և շատ-շատ՝ դրանց հետ աւելացնում էին մի հարստահարիչ չարչի կամ վաշխառու։ Պատկերը ամբողջացած էր համարվում, և մի և նոյն տիպարները, մինը միւսից առնելով, զանազան ձեւով ծամծմում էին։ Եւ ով որ մի այսպիսի գիրք էր գրում, արդէն գըրականական մանդարինի փառքը ստացած էր համարում։ Նրանց պահանջները սահման չունէին։ Քինթները բարձրացրած զարմանում էին, թէ ի՞նչու ամէն կողմից մատով չեն ցոյց տալիս նրանց։ Եւ եթէ մարդիկ ուշադրութիւն չէին դարձնում, իրանք իրանց մատով ցոյց տալու անհամեստութիւնն եւս ունէին։

Դրանց համար անցեալ պատմութիւն չը կար։ Դրանց համար չը կար և ապագայ։ Դրանք ծանօթ էին այն գիւղի հետ միայն, որի մէջ ծնուած էին, և որի սահմաններից դուրս մի այլ կեանք չէին ճանաչում։ Դրանց աշխարհահայեցողութեան թաշիքը իրանց գիւղի հորիզոնից աւելի հեռու չէր անցնում։ Եւ եթէ պատահում էր, որ ոտքը դուրս էին դընում իրանց գիւղից, խիստ մոլորվում էին, և խրվում էին յիմարութիւնների մէջ։

Երկար ժամանակ վիպագրութիւնը նոյն նեղ, միակողմանի շաւղով ընթանալով, նոյն շաւղի վրայ մնաց և քարացաւ, առանց որ և է յառաջադիմութիւն գործելու։ Նա չը կարողացաւ նոր լեզու մշակել, որովհետեւ գրվում էր գեղջկական բարբառով։ Նա չը կարողացաւ ընթերցանութիւն տարածել, որովհետեւ հասկանալի էր միայն այն շրջանին, որի բարբառով գրուած էր։ Եւ այսպէս, իրանք հեղինակները իրանց աշխատութիւնները դատապարտեցին շուտափոյթ մահուան և սկսեցին կատաղել, թէ ի՞նչու յաջողութիւն չը գտան։ Նրանց աշխատութիւնները մնացին գրականութեան համար՝ իբրեւ լեզուագիտական ցամաք նիւթ, իսկ գեղարուեստի համար՝ իբրեւ շատ հասարակ արդիւնք։

Ահա այս էր Աբովեանի ստեղծած ընդլայնը։ Նրա ներկայացուցիչները մինչեւ այսօր եւս գոյութիւն ունեն, շարունակում են ապրել, ոչ նորոգվում են և ոչ փոխվում, այլ եգիպտական մումիաների նման պահպանում են մի տեսակ մեռած կենդանութիւն։

Մենք անունների հետ առ այժմ գործ չունենք։ Մենք արդէն ձեռնարկել ենք կազմել հայոց վիպագրութեան պատմութիւնը, սկսեալ Աբովեանից մինչեւ մեր ժամանակները։ Նոյն աշխատութեան մէջ իւրաքանչիւրին երեւան կը հանենք իւր վաստակներով։

——

Մինչդեռ վիպագրութիւնը անդրկովկասեան հայերի մէջ այդ դրութեան մէջ էր, տարերի միւս կողմում, հեռաւոր Մոսկուայում, հրատարակվում էր «Հիւսիսափայլը»։ Կեանքից տարակաց, օտար հողի վրա, շատ հասկանալի է, որ չէր կարող ստեղծուել բուն հայկական վիպագրութիւն։ Եւ դրանով պէտք է բացատրել «Հիւսիսափայլի» անուութիւնը, որ նա իւր ամբողջ տեւողութեան ընթացքում, բացի մի քանի աննշան պատկերներից, չը տըուաց ոչ մի հայոց վէպ։ Նա բաւականացաւ թարգմանութիւններով միայն։

Բայց Նազարեանցի շուրջը, հակառակ նրա ցանկութեան, ծնունդ առաց մի այլ տեսակ վիպագրութիւն։ Որովհետեւ հայոց ընդհանուր կեանք չը կար, որովհետեւ նրա ամենագիրը հրատարակվում էր հայ գաղթականների մի շատ նեղ շրջանում, այդ պատճառով եւս, վիպագրութիւնը այնտեղ բոլորովին նեղ և մասնաւոր կերպարանք ստացաւ։ Փոխանակ ընդհանուր տիպարներ երեւան հանելու, ըսկսեց նկարագրել զանազան անձանց առանձնական կամ ընտանեկան կեանքը։

Իբրեւ մասնաւոր անձանց պատկերներ, կարող էին այս տեսակ նկարները իրանց առանձին նշանակութիւնն ունենալ, եթէ նկարիչները դրդուած չը լինէին միմիայն անձնական հաշիւներից։ Կիրքը ստիպում էր նրանց այլանդակել պատկերները։ Այդ ուղղութիւնը առաջ բերեց մի քանի մուրացկան-գրողներ, որոնք անբարոյականացրին վիպագրութիւնը և նրան բոլորովին անպատկառ պարսաւաբանութեան ձեւ տուին։ Նրանք պատրաստ էին փառաբանել և ամենագեղեցիկ գոյներով նկարագրել, եթէ նրանց փող կը տային, և մի և նոյն անձին պատրաստ էին ցեխի մէջ թաթախել, եթէ նրանց հաճոյքները կը մերժէին։

Եւ այսպէս, «Հիւսիսափայլը» հայոց վիպագրութեան չը նպաստեց, և անկարող էր նպաստել, որովհետեւ նա հայոց կեանքից անջատուած էր։ Նա նպաստեց միայն բանաստեղծութեան, և աւելի քընարերգական բանաստեղծութեան։

——

1872 թուին սկսուեց հրատարակուել Մշակը։ Մինչեւ այս լրագրի ըսս տեսնելը, հայկական աշխարհի հորիզոնը այնքան նեղ էր, որ մի փոքր հեռաւորութեան վրա՝ ոչ ոք չը գիտէր, թէ ինչ է կատարվում կեանք, կարծես թէ, չը կար, կամ եթէ կար, նրա վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում։ Հարցերը ինքնաբերաբար զարթնում էին, և դարձեալ ինքնաբերաբար քնում էին։ Ամէն ինչ միապաւում էր մի տեսակ խուլ, մեռելային թմրութեան մէջ։ Կար մի լրագիր, բայց մի քանի մարդիկ միայն գիտէին՝ թէ նա կար։ Նրա գոյութեան մասին յիշում էին այն ժամանակ միայն, երբ մէկին շղոքորթում էր, իսկ միւսին պախարակում, կամ երբ մի փոքր հիմարկութիւն պաշտպանում էր, իսկ մի նոր միաք հալածում։ Կենսական հարցերը մնում էին բոլորովին լքեալ դըրութեան մէջ, իսկ անվերջ վիճաբանութիւնները պտոյտում էին մի փոքրիկ խմբակի չահերի շուրջը, որի պարագլուխը էր ինքը խմբագիրը։

Մշակը իւր մոգական հարուածով միանգամից շարժեց հասարակական թըմբած մարմինը։ Մարդիկ յանկարծ աչքերը բաց արին, սկսեցին մտածել իրանց գործերի վրա, սկսեցին մտածել իրանց պէտքերի վրա։ Լրագիրը դարձաւ հասարակութեան դաստիարակ և, մի և նոյն ժամանակ, նրա ընդհանուր կարիքների արտայայտութիւն։

Մշակը ընդարձակեց, լայնացրեց մեր աշխարհի նեղ հորիզոնը։ Ոչ միայն ռուսաստանցի հայի, այլ ամենուրեք, ուր որ հայեր էին ապրում,—բոլորի գործերն ու կեանքը նրա քննադատութեան առարկան դարձաւ։ Նա առաջինն եղաւ, որ ծանօթացրեց ռուսահայերին իրանց տաճկաստանցի, պարսկաստանցի, հնդկաստանցի և երկրագնդի զանազան կողմերում ցրուած եղբայրների հետ, որոնք առաջ մոռացուած, և մինչեւ անգամ արհամարհուած էին։ Նա ուշադրութիւն դարձրեց և հայի դրացի օտարազգիների վրա, որոնց վիճակի ուսումնասիրութիւնը հայոց լրագիրը իւր պարտքը չէր համարում։

Իւր բոլորին թարմ երիտասարդ խըմբագրի ղեկավարութեան ներքոյ, Մշակը հեղեղեց հասարակութիւնը մի նոր, կենդանացուցիչ հոսանքով, որ ամենամոքը ժամանակում արգասաւոր արդիւնք ունեցաւ։ Վաղեմի, աւանդական ինքնաբերութեան փոխարէն, սկսեց տիրապետել կրիտական հայացքը։ Ինքնաքննութիւնը և ինքնաճանաչութիւնը,—ահա՛ այն դրդոչ և առաջ մղող տեսակէտը, որով սողոսկացրեց նա հայ հասարակութեանը մտածել իւր պէտքերի և իւր թերութիւնների վրա։

Այդ բոլորը, ի հարկէ, չէր կարող չը գրգռել խաւարասէրների բարկութիւնը։ Հին փարիսեցին կատաղեց, հին գպիրը փրփրեց, և ամէն կողմից սկսեցին քարեր արձակել։ Բայց քաջ մարտիկը անվհեր կերպով առաջ տարաւ իւր սկսած գործը, և յա՛ء տարաւ։

Մշակի ուղղութիւնը խիստ բարերար ազդեցութիւն ունեցաւ և վիպագրութեան վրա։ Նրա օրերում վիպագրութիւնը աւելի լայն շրջանակի մէջ դրեց իւր պատկերները։ Նա դուրս եկաւ Աբովեանի չկոլայի գեղջկական նեղ շրջանից, և սկսեց հետազօտել ժողովրդի կեանքի ամէն կողմերը։ Նա աւելի խոր թափանցեց զանազան դասակարգերի բոլոր ծալքերի, և բոլոր խաւերի մէջ, և երեւան հանեց նոր տիպարներ, նոր երեւոյթներ։ Քննադատական ոգին միացաւ արհեստի գեղեցկութեան հետ, և վիպագրութիւնը աւելի բէալական հողի վրա դրուեցաւ։

Մշակի օրով գաւառական բարբառները ընկան, և գրական լեզուն առաջին անգամ համարձակութիւն ստացաւ վէպի լեզու լինելու։ Գեղարուեստի հետ՝ սկսեց գեղեցկանալ նա, և նիւթի բազմակողմանութեան հետ՝ սկսեց մշակուել և հարստանալ։

Այս լրագրի հէնց սկսուելու օրից՝ նրա մշտական աշխատակիցը լինելու բախտն ենք ունեցել, և շարունակ 14 տարի նրա լծակի ծանրութեան մի կողմը մեր ուսերի վրա ենք տարել։

Թող ներուի մեզ, որ մենք մեր մասին պիտի խօսենք։ Իւր մասին անդադար խօսում էր բազմարդիւն Նազարեանցը, որովհետեւ թշնամիները միշտ վատ էին խօսում իւր մասին երբեմն խօսացել է՝ և Գրիգոր Արծրունին, որովհետեւ խաւարասէրները, խարեբաները միշտ հալածել են նրան, իսկ հայ հասարակութիւնը տակաւին չէ ճանաչել իւր անկեղծ բարեկամին։ Մեր մասին էլ մենք պէտք է խօսենք, մինչեւ կը լռեն չար զօիլները, մինչեւ կը պապանձուեն նեխած ճահիճների մէջ սնանուող զզուելի զեռունները, և կը յայտնուեն անաչառ մարդիկ, որ ցոյց կը տան, թէ ո՛վ ի՞նչ է արել։ Քանի դեռ գործին հմուտ և արդարադատ անձինք յանձն չեմ առնում քննադատել իրանց գործիչների արդիւնքները, քանի դեռ ասպարէզը մնացել է վատերին և չարլատաններին, այդ դէպքում, գործիչը ըստիպուած է, ոչ թէ ինքնագովութեան համար, այլ դէթ ինքնապաշտպանութեան համար՝ ցոյց տալ, թէ ի՞նչ է արել ինքը։ Մեր հասարակութիւնը սաստիկ մոռացկոտ է, պէտք է միշտ յիշեցնել նրան։

Մեր գրական ասպարիզում գործել ենք՝ թէ՛ հրապարակաւոր և թէ՛ իրրեւ վիպագիր։ Առաջինի մասին չենք խօսում, բաւական է միայն բաց անել «Հիւսիսափայլի», Մշակի, «Փորձի» համարները՝ համոզուելու համար, թէ ի՞նչ ենք գրել։ Մենք մի փոքրիկ հաշիւ կը ներկայացնենք մեր վիպական վաստակների մասին։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրութիւն չէր դարձրել մի մռայլ դասակարգի վրա, որ խաւարի մէջ կեղեքում էր իւր զոհերին, և անյագ վամպիրի նման ծծում էր նրանց արիւնը։ Դա էր հարստահարիչ վաճառականների և վաշխառուների հասարակութիւնը, որ ոսկու փայլով սնգուրել էր իւր դէմքը, և մեծ յարգանք էր վայելում։ Մենք պատառեցինք նրա ոսկեղէն դիմակը, մեք ցոյց տուինք նրա այլանդակութիւնը, երբ գրեցինք «Ոսկի Աքաղաղը», «Ուխտակ Միանձնուհին» և «Անմեղ վաճառքը»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրութիւն չէր դարձրել ուրիշ երկրի հայերի կեանքի վրա։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրութիւն չէր դարձրել Պարսկաստանի հայերի դրութեան վրա։ Մենք նըկարագրեցինք նրանց աննախանձելի կեանքի պատկերները, երբ գրեցինք՝ «Գեղեցիկ Վարթիկը», «Սովը», «Կուսագրութիւնը», «Անբախտ Հռիփսիմէն», «Մի օրավար հողը» և այլն։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրութիւն չէր դարձրել հասարակական կազմութեան մի բոլորովին նեխած, ապականուած մասնի վրա, որ գործում էր մթին խորշերում։ Մենք երեւան հանեցինք այդ անծանօթ հասարակութիւնը, երբ գրեցինք «Խաչագողի Ցիշատակարանը»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրութիւն չէր դարձրել անցեալի վրա։ Մենք եղանք առաջինը, որ մոռանք պատմութեան խորքերը և մոռացութեան վիհից ի լոյս ածեցինք հին ժամանակների հերոսներին, երբ գրեցինք «Դաւիթ բէկը», «Պարոյր Հայկազը», «Սամուէլը», և Թարգմանեցինք «Ղարաբաղի ասղագէտը»։

Մեզանից առաջ մեր պատմութիւնը սկսվում էր Հայկից և վերջանում էր Լեւոն Զ-ով։ Մենք եղանք առաջինը, որ անյայտութեան միջից գտանք մի կորած զարապղեան իշխանութիւն, երբ գրեցինք «Խամսայի Մէլիքութիւնները»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան չէր մտածել օտար ազգերի կեանքը հայոց վէպի նիւթ դարձնել։ Մենք տուեցինք առաջին օրինակը, երբ գրեցինք «Բիրի-Շարաբանին», «Խազ-փուշները» և այլն։

Մենք չենք խօսում մեր զանազան ուղեգրութիւնների ժողովրդագրական նըկարագրների, մասին, ինչպէս են «Հայ կինը», «Հայ երիտասարդութիւնը» և այլն, բայց հանգիստ խիղճով մեղմայլ ենք տալիս ասել, որ երկար տարիների տակուն աշխատութեամբ՝ կարողացել ենք դնել հայ հասարակութեան ընթերցանութեան սեղանի վրայ իսուսի չափ վէպեր, վէպիկներ և զանազան պատկերներ։

Մենք չենք ունեցել մեր նախորդը, այլ մեր ետեւից քարշ ենք տուել նոր գըրողներին։ Մենք առաջինն ենք եղել, որ վստահութիւն ենք ունեցել հայոց դեռ անմշակ, աղքատ գրական լեզուն վէպի լեզու դարձնելու, և մեր աշխատութիւնների մէջ պահպանել ենք մեզ յատուկ ինքնուրոյնութիւնը։

Իբրեւ մի նոր ուղղութեան կարապետ, շատ բնական էր, որ մենք պէտք է թըշնամիներ և նախանձորդներ վաստակէինք։ Եւ վաստակեցինք...

Շատ գործել և սակաւ խօսել,—միշտ այս է եղել մեր կեանքի կանոնը... Թող ներուի մեզ, որ այս անգամ մեղանչեցինք մեր սովորական համեստութեան դէմ։

(Մշակ) ՐԱՖՖԻ

ՄԵԿՆՄԱՆ ՊԱՏՃԱՌԱՒ

Պ. Քնյաթի կը վաճառէ իւր կահ կարասին որ Գանդիլիի նաւամատոյցին մօտ գտնուած Նալբին մէջը կը գտնուի։ Վաճառումը տեղի պիտի ունենայ հաշտ պայմաններով, սկսեալ այն օրէն։ 2—6

ԱՆԴՈՆԻՈ ԲԷՌԻՆԻ

Կ։ ՊՈԼԻՍ

61 եւ 71 — Պէպէթիա, Կոստանդնապոլ — 61 եւ 71

Հանգուցեալ ԱՆԴՈՆԻՈ ԲԷՌԻՆԻի ժառանգորդները պատիւ ունին հրաւիրել իրենց բարեկամներն յաճախորդներն, ինչպէս և հասարակութիւնն, որ հաճի այցելել իրենց վաճառատունները, զորս ի նորոյ լցուցած են ամէն տեսակ նոր առարկայներով, ինչպէս, Խոհանոցի վառարաններ ամէն տեսակ։ Վառարաններ յախճապակիէ, երկաթէ, երկաթեայ թիթեղէ եւն։ Խոհանոցի ամէն տեսակ պիտոյք կիսուռածաւոր թափծու երկաթէ, կիսուռածաւոր երկաթէ եւ ֆրանսական պղինձէ։ Պոռէ ժամացոյցներ։ Լամբրե։ Դանգիներ (ֆրանսական ապրանք) ալբակա և ածաթապօծ ալբակա։ արծաթապօծ դեղին մետալէ Անգլիական դանակներ եղջիւրի և երենոսկայ կոթերով։ Պորէզէ ջրհաններ, հրդեհի ջրհաններ, Պարանգի կաթսաներ, Հավաթի ծորակներ, ամէն տեսակ Լոչարաններ եւն եւն։

ՇԱՏ ՁԱԾԱՒՈՐ ԳՆԵՐ

Ծան։ Բէռինի վաճառատունն ունի արհեստանոց մը՝ հարկ եղած ամէն մեքենայներով՝ կատարելու համար յանձնարարեալ ամէն աշխատութիւն։

Ի Դիմաց Ա։ Բէռինիի ժառանգորդաց
294 Ժ։ Պ։ Բէռինի

ՍԳԱՊԵՒ ՄՕՐԻՍ ՁԵՒՆ ՕՇԱՐԱԿ

Միլան, 26 սեպտեմբեր 1885

Պարոնայ Սգոգ և Պոռն,

Սգոգի օշարակը գործածութեան մէջ սուտ չունի գինը, աղքատաց նիւթերուն առատութիւնը։ Կ'երեւի իսկ թէ իրենց խառնուրդը, թո՛ղ որ երկարգն ալ ա՛ւելի սխորժահար կ'ընէ, կ'աւելցնէ նաև տենց կազդուրիչ յատկութիւնները։

Այս պարատութիւնը լաւ տեղ մը դրաւելու սահմանեալ է մանկանց հիւանդութեանց մէջ։

ՏՐ։ ԿԱԼԷԴԱՆՈ ՍԳՈԳԱՊԵՒ

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Ինչպէս որ ասկերկայէ իշուն մէկդրչի միւնադասայա գօնուլան չիմէնթօ իլէ գինքօ էնվարնը չուպաթը օն պիրինճի ճումա իրթէսի կիւնի գարարը գաթիսի վէ իրթէսի կիւնի եիւզտէ պէշ թէնգելի իճրա վէ գապալ օլունճաղընտան թալիպ օլանլարը ինչպէս տարբէսինէ միւրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր։

8 Շուպաթ 1889 346
Նօ։ 23 1—3

——

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍԿԷՐԻ

Գալէվրախանէ իշուն միւպաեա օլընճաղ իքի պին սէքիզ եիւզ գըյեէի ճէտիտ վաքէթանը պէհէր գըյեէի ճէտիտի օն եէտի զուուշ թալիպի էօհտէսինտէ օլուպ չուպաթը օն պիրինճի ճումա իրթէսի կիւնինէ գատար պէհէր կիւն միւնադասասը իճրա օլընարագ մէգթիւր կիւնտէ գարարը գաթիսի վիրիլէճէկինէն իթասընա վէ իրթէսի կիւն եիւզտէ 5 թէնգելինէ թալիպ օլանլարը մագամը Սէրասքէրի լէվազիմաթը ումմիլյէ տարբէսինէ կէմէլէրի իլան օլունուր։

7 շուպաթ 1889 344
Նօ։ 21 2—3

——

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ Ս ԵՏԱՔՍԵՂԻՆԱՑ

ԲԱԲԱՏՈՒՐԼՈ ԵՂԲԱՐՔ

Մեծ Շուկայ Պոլսոյ, Բէլպաղճը խան թիւ 3 եւ 4, Քալքաճըլար Պաղը թիւ 31 եւ 33, եւ Սանտալ Պէզէսթէնի մօտ թիւ 34

ՄԵԾԱԳԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԳԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Բաւատարելու եղարքը պատիւ ունին ծանուցանել արդէն հասարակութեան և իրենց բազմաթիւ յաճախորդաց թէ վերջերս ուղղակի ստացած են՝ բոլորովին նպաստաւոր և արտակարգ պայմաններով մեծ քանակութեամբ ճոխ և բազմազան հաւաքածոյ մը, Լիմոնի լաւագոյն և ամէնէն հմտաբաւաւոր գործարանչներն կուած, ինչպէս եւ Բարիզի ամէն տեսակ նորելուկներ ԱՄԵՆԱԶԳԻ ԹԱՒԻՇՆԵՐԻ, ՍԻՐԲԱՀ, ՄԱՊԵՌՈՒ, Ս։ ԳԻՆ ԼԻԵՐՈՒՈՐ, ՅԱՅԼ ՅԻՐԱՆՆԵՐ, ու զանազան տեսակ կերպասներ պրոնեներու Վարաղայրներու համար։

Ամենը օրը իրենց այդեղութեամբ պատուեն այս կասեւոր հաստատութիւնը, բոլորովին գոհ պիտի մնան է՛յլ ա՛ւելանց բնարել ազգին տեսակէն եւ թէ տնամութենն, որովհետեւ, այս վաճառատանց մեծ վաճառումը կը շատանայ արդար եւ թրդճամիտ շնչով մը, ինչպէս ապացոյցը դիւրին է տեսնել։

264

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՈՆՍՈԼԻՏԻ ՊԱՐՏՔ

1881 Դեկտեմբեր 8|20ի Կայսերական Իրատէով թողեալ հասոյթք

Է։ ՏԱՐԵՇՐՋԱՆ–ՅՈՒՆՎԱՐ 1889

ՀԱՍՈՅԹՔ	Զուտ հասոյթ գաւառ։ փարչ։ Դրուշ	Ընդհ։ տնօրէնութեան կողմէ վճարեալ ծախք Դրուշ	ԶՈՒՏ ՀԱՍՈՅԹՔ Գաւառական եւ կեդրոնական վարչութեան Դրուշ	Օսմ։ ոսկի	Նախորդ ամիսներէն Օսմ։ ոսկի	Գումար մինչեւ 1889 Յունվար 31 Օսմ։ ոսկի
Վեց ամսուրջակի տուրք։ Սրխանոտ (յեանկայ տրոց գանձու մն)։ Ադ։ Դրոշմ։ Ոգելից ըմպելիք։ Զինարան։ Մետաքս	6,661,531 76	(1) 224,828 22	6,436,703 54	62,201 04	724,496 78	786,697 82
Ծխախոտ։ Հասոյթք Բէժիէն(*)	...	...	...	...	750,000 ...	750,000 ...
Ջանազան եկամուտք։ Հարկ Պուլկարիոյ փոխանակեալ ծխախոտի տասանորդէն առնուելիք 100,000 Օսմ։ լիրայով՝ մինչեւ ցորոշումն յետեալ հարկին։ Յաւելուած Կիպրոսի հասութիցն փոխանակեալ ծխախոտի տասանորդին յաւելուածով, կամ Մաքսատան վրայ փոխանակագրէ գոյանալիք 130,000 Օսմ։ լիրայով։ Արեւելեան Ռումելիի տարեկան հարկէն։ Թեմնիքքիի տուրք, Մաքսատունէն փոխանակագրով վճարելի։ Սերպիոյ, Դարատաղի, Պուլկարիոյ և Յունաստանի բաժին ինկած պարտք։ Գումար	279,408 88	...	279,408 88	2,721 44	61,387 10	64,108 54
					65,000 ...	65,000 ...
	1,266,886 ...	...	1,266,886 ...	12,668 86	126,688 60	139,357 46
	...	...	...	...	25,000 ...	25,000 ...
	...	...	...	...	...	...
	8,207,826 64	224,828 22	7,982,998 42	77,591 34	1,752572 48	1,830163 82
Ջանազան Պատարագներ։ Պատարագ դրամներէ առնուած շահ։ Լուսնպայաշահ (ժաթիս) գրամոց փոխանակութեան վրայ։ Ընդհ։ գումար	...	...	...	...	...	...
	...	...	...	...	—3,382 62	—3,382 62
	8,207,826 64	224,828 22	7,982,998 42	77,591 34	1,749189 86	1,826781 20

	Դրուշ	Օսմ։ ոսկի	Օսմ։ ոսկի
Լաճարեալ դումարք Կայսերական Իրատէին 10 և երկու յօդուածներով նախատեսեալ արժէթիթերուն ի հաշիւ։		295,000 ...	...
Քեռնոյիսկի պարտուց տոկոսին համար Եէրոպա քաշուած և Կ։ Պոլիս վճարուած գումարք։		1,082336 53	...
Օսմանեան Ընդհանուր Պարտուց Վարչական Խորհրդին ընդհանուր ծախք։		21,936 44	...
Օսմ։ Կայսերական Պանքան գրուած ոսկեդրամ։		121,181 82	...
» » » » փոխանակելի դրամ։	31,519806 40	305,962 31	...
Կ։ դրամական վարչութեան մնացեալին մէջ ոսկեդրամ։		...	...
» » » » փոխանակելի դրամ։	36,750 15	364 10	...
			1,826781 20

(1) Մէջն առնելով նաեւ 1621·87 1/2 ղրուշ, այսինքն 1570·20 ղրուշ ոսկեդրամ, Միւսուբիկիի վրայ տուրքէն առնուած բաժին։

Ի Դիմաց Վարչական Խորհրդոյ
Նախագահ (Սոր։) Վ։ ԻՆՆԸԼՆ ԲԱՅՍՐՏ
Խորհրդական Պատուիրակ (Սոր։) Կ։ ՇԷՆԷՐ

Վաւերացեալ ճշդութիւնն ըստ սովորոյց
Կ։ Պոլիս, 5/17 Փետրուար 1889 (Կ։Խ։)

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

96

ՆՈՐՔՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐԻԿԵԱՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՈՅՑ 1,932,350

ՆՈՐՔՀՐԸՆ ԷՅՈՐՔԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՈՅՑ 946,800

Ընկերութիւնքս Պարսկաստանի մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած ողջամտական կրաւորութեամբ մեծ դատարաններ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել։ Նաև իրը ապացոյց իրենց հատատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուժած վնասներն 15,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼԻՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 — ՄԱՐԻԹԱՅՄ — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիօն խանի անկի նն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

ՐՈՊԷՆՍՈՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱԹԱՆՈՒԹԻՒՆ
ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԲՈՒԼՃԻ ԵՒ ԼՅՈՒՍԻՆԱՊՈՒՆ
Ի Գալաթիա Սուլթան Համամ Աղբ Խանի թիւ 15 և 17
Կը վաճառուի մեծ և փոքր բանակութեամբ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՒՐՏՍԻՈՆ

Այս փաղանգն և հոչակաւոր մթերանոցին մէջ տարօրինակ ածանութեամբ ի գտնուին Եւրոպայի զանազան քաղաքներէն վերջին նորաձեւութեանց համաձայն բերուած արանց և կանանց յատուկ ամէն տեսակ ձերմակեղէնք հագուստք, զուարաքք, կանանց յատուկ զգեստեղէնք և այլն։ Բաւական է անգամ մը այցելել ՐՈՊԷՆՍՈՆԻ մթերանոցը տեսնելու համար ապրանաց գեղեցկութիւնը, գեղեցկութիւնն և գնելու այնպիսի ածանութիւն որ գործատէրի գնոյն կը հաւասարի և չիրնար մրցող մը ունենալ։

Գիներն որոշուած են Օսմանեան ոսկին 108 գրուշի հաշուով։ 5

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԳԷՄ ՀՐԴԵՀԻ
THE MUTUAL ACCIDENT ASSOCIATION LIMITED
ԱՐԿԱԾԻ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Եւրոպատրեալ դրամագլուխ 100000 անգլ. ոսկի ամբողջ. ստորագրեալ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄՈՒՐՀԱՒԻ

Տարեկան 4 սակէ պրոմիա մը կ'ապահովէ 1000 ոսկի, Մահուան կամ Աչքսաան և բարձրակի անկարողութեան պարագայի մէջ։
333 ոսկի, Աչքսաան և մասնական անկարողութեան պարագայի մէջ։
Շաբաթական 6 ոսկի, սաստիկ անկարողութեան պարագայի մէջ, թէ՛ ամբողջական և թէ՛ մասնական։

GLASGOW & LONDON ԳԱԼԱԳՈՒԻ ԵՒ ԼՕՆՏՕՆ

Դրամագլուխ 300,000 Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալ ՀՈՖՄԱՆ ԵՒ ԼԻԹԼԱՐԻ եւ ԸՆԿ.
(171) Պոլիս, Սուլթան Համամ, Սուրբ Խաչ խանի թիւ 13, 14, 15

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Թեատրական ներկերու համար կոշիկներն որք առաջին անգամին կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլն, որ նշանաւոր պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տեւէ։ Կոշիկներն անթափանցելի կ'ըլլան ջրի և խոնաւութեան։ Ցիլոնը կամ ուրիշ ապատեղութիւններ գիւրաւ կը վերցուին թաց լաթով մը, առանց փոխելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը գտնուի առանց և մանանց ամէն տեսակ կոշիկներու։ Կարելի է գործածել զայն նոր գոյնի համար ճամբորդութեան կաշեանոտուները։

Գործածման եղանակ։ Ներկերի տարբերն իմանալի պրեղ, որովհետ որ հին ներկին հետ չմնար։ Ապա փայլան հեղուկին բանալ, կամ՝ ապուռնի կտորով մը կամ վրձնով։ Թրջուած մասերն ալիին ընդունի կը չորնայ։

Զգուշանալ ներկին։

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՅՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԻ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Զմիրնա, Պահանջանցին քով, կայսրան Ղալաթիա-Շէշլի Թրամուէյից, թիւ 95 և 97, Ղալաթիա։ 78

ԴԻՆ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տոքթոր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղն՝ որ անխարան թաղդրութիւն մի է զուտ բուսեղինաց, է գտանելի համ և ապդու կաղգուրիչ ամէն տեսակ ֆիլիզական ասանդարանց, որ յատուկ կուգան ճոխանաւոր կայերու։ Ջերմատ կիմոյից վատ ու ապատակալ օդերն, որուն ազատակարութիւնը և ապաքինիչ ատոյ յատկութիւնը երբեմն արդ ի նդատ հատաւոր ապեանցը սատոյ պիտութիւնքն։ Այս ֆիլիզական թանկարժէք մեր [illegible] զան օգին մէջ [illegible] [illegible] բերի նրբոց դէջցու, որք թոքերն անցնելով՝ կը տանուն արեան մէջ [illegible] գարեն լեարդը, և յատուկ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և ապեան թունաւորուն, որոց՝ աս տենդերը արուած է ջերմեն և սարսուռ, թարդ ջերմ [illegible] մարդարեն տանել և տրատոյ տենդ, ը։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այդ տեղերուր մինչեւ որ ապանեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճաղճաղուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակտիներէն ելած թունաւոր կաղերով, զորս մարդիկ կը ծծեն ընչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը չնչէ այդ թունաւոր նիւթոց կամ կաղերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն ստոյգ, միայն թէ տրուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախսի Միասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 166

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

Պատիւ ունինք ծանուցանել Արդոյ ՏՊԱԳՐՈՒԶԱՑ, ԿԱԶՄԱԲԱՐԱՑ եւ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՑ որ, եթէ կը կամին ունենալ ալ ալ ուեստին վերաբերող մեքենայներ կամ գրիծներ, կրնան մեզ դիմել եւ յանձնարարութեամբ ատանալ, ՎԵՑԶԻՆ ԿԱՏԱՆԵԼՈՒ ԻՐՕՐԻՒԹԻՒՆՆՑ ՀԱՄԱԶՈՅՑՆ, ԴԻՐԱՇԱՐԻ, ԱՐԳ, ՏՈՒՆ ԵՒ ՁԻԼԴ մեքենայներ թէ՛ տպագրական, թէ՛ վիմագրական և թէ՛ [illegible] ատանալ։

Մասնաւորապէս արուեստագիտաց ուշադրութիւնը կը հրաւիրենք, Ֆիլիպէն տան շինած մեքենայից վրայ որոյ օրինակները թէ՛ վիմագրական և թէ տպագրական իրենց ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ այն տան, բերել տուած ենք և որք յոյժ գնահատուած են զայն։ տատոյ անձանց կողմանէ։ Այն ամէն անձինք որք կ'ուզեն տեսնել Ֆիլիպէնի մեքենայները կրնան մեզ դիմել և ստանալ միանգամայն այն ամէն մանրամասն տեղեկութիւններն որոյ պէտքը կ'ունենան։

Ֆիլիպէն մեքենայից մասնաւորութեանց մէն է նաեւ՝ փոքր միջոցի մէջ գետեղուիլն, ինչ որ շատ պտղաղ այլոց մէջ անհրաժեշտ պէտք մի է և տանի առթիւ մեքենային գործածումը կը դիւրացնէ։

Ֆիլիպէն մեքենայից մասնաւորութեանց մէն է նաեւ՝ առանց դիմակի, լաւագոյն բանին, որով թէ՛ մեքենայն ղերծ լինելով ցնցումէ չը մաշիր և՝ [illegible] գործածողաց անհանգստութիւն չը պատճառեր։

Ֆիլիպէն մեքենայք իւրեանց ամէն կատարելութեամբք, միանգամայն, ՅՈՅԺ ԶԱՆԱԻՈՐ գնեբով կը վաճառուին։

Այն ամէն անձինք թէ՛ ի Պոլիս և թէ ի գաւառս որ պէտք ունին մեքենայից և գործեաց և կամ ո՛ և է տեղեկութեան, կրնան մեզ դիմել հետեւեալ հասցէիս։

Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
465, Օտուն-գաբու, 465
Կ. Պոլիս

S. DAMADIAN
465, Odoun-kapou, 465
Constantinople

1—25 328

PAPIER FAYARD ET BLAYN

60 տարուընկ ուելի յաջողութիւն կը յանձնարարէ զնա ի բուժուզ հոգեբոյի, կոտրելի բարբոսանց, յօդացաւի, ցաւերու, վերքերու, կոտրերու և այլն։ 331
Կը ծախսուի բոլոր դեղաբանաց մէջ։ (Փնտռել մեր ստորագրութիւնը)։ 2—12

ԳՈԼԻԲԻԷՆԻ ԳԻՆԻՆ, հիշատակեմ և կաղգուրիչ բոմպերի մէջ, յարգեալ Բարդայի գինի, Լիսպոնի մսի հիւթ և Փաղեի հիւթ, կազմեալ այսպէս անուանեալ զարատ և գրդուչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ անդամ մարդոց համար լաւ է հաւասարապէս։

Թիշլայան հոմոպաթան հաւանած է նոա և ազատիթ նշանաւոր բժիշկներ յանձնարարեալ է։ Հանրոյ անձնի փոխն զ ուած են իրենց գիտութիւններն։ Այս կը թարգմանեք գիրքերն ապրիծ։

Թ. ՐԻՃԻՆԱԼՏ ՃՈՆԼԻՍ, Մ. Ր. Ա. Ա. Լ. Լ. Մ. Ֆ. Ա. Ր. Ճ.ԷԻ ԸՆԿ.
26, Լոր Ֆոս և 24 Համիլդն Սգուեար
Ղէրնսիա, 2 սեպտեմբեր 1888

Պարոնաք — ի նեստ առելով խարդախ մրցման մը հանած զանազան լուրերը, կը փափաքիմ յայտնապէս գուսել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մալ և Մալթի պատրաստութենէն։ Քանի քանի անգամներ տեսած եմ ես ի առողջարար ազդեցութիւնն այն հիւանդութեանց վրայ որոց հանար պատուիրած եմ գրել, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս գրեմ (առանց մուրհակ) չպիտի կրնար տալ։

Ընդունեցէք, և այլն և այլն

Թ. ՐԻՃԻՆԱԼՏ ՃՈՆԼԻՍ

Ի վերջոյ, մեր աղաչիս գլուաւոր բժիշկ ջերմագէս յանձնարարած են զայն։

Հարցնել ԳՈԼԻԲԻԷՆԻ ԳԻՆԻՆ Լիսպոնի մսի և Մալթի խառնուրդով գեղաշնաչ կեղծերն։

Դիմեցէք ստորագրեալն, միակ գործակալ ի Թուրքիա Դոլիման և ընկերութեան գործարանին

Ս. Ճորճ Դորուէլ և Լոնտոն։

ԷՅՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԻ

ԸՆԴ ԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահանջանցին քով, կայսրան Ղալաթիա-Շէշլի Թրամուէյից- թիւ 95 և 97, Ղալաթիա 80

ՀԱՁՍ. ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՑՐՈՆՇԻԳԻ, ՀԱՐԲԱՒԻԹԻ, ՑՐՏՍՈՒԱԻԹ ԱՆ ԵՒ ՁԱՑԻ ԿՐԿՆԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՉԱՓԻԼԻ ԵՒ ԹՈՉԱՖՈՂԻ ՀԻՒԱՆԴԻ ՑԵՆԱՆՑ դէմ՝ իբր ապահովագարման այս դեղին վաճառած համբաւը մինչ կը հասնուսուի այն բազմաթիւ նամակներով զոր Պ. Բաուէլ կ'ստանայ անմոռաց որք գործածած և մանրցած են զայն յայտնութիւններու։

«Ապրելոյ թանաքեանն նշանին թեթեւանալուն վրայ, ի Ռէնք, Ինդիան.

«Սիրելի պարոն Դաս որ մ'որ նեղուելի յանուս Հարկ մը որ գիշերը կարգելուր ինձ բնանալ և ցերեկ հանգիստ անցանել, Ինչ. Կոմս Գարթնէս յանձնարարեց ինձ գործածել ձեր անզուգական բալասանն անիսանի հոտ ինքնաբերաբար։ Բնամ հանատանել ձեզ թէ առ Ջին գործած ելիանն իսկ զգալի բարուոքում կրնցիր առանց իսկ պիտոր ունենալու գործերս դադարցնելու, և առաջին փոքր սրուակը բոլոր ոյին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն այլոց։

(Սոր.) Վ. ԼԻՆԶԼԻ, նեգրի թեղանոթակրէն.

Կը վաճառուի ամէն դեղատանց և արտանոյ դեղերու վաճառականաց քով։ տիրոջ 1 շիլին Վչ բէնսի, 2 բոլ, 3 բէնսի և 11 շիլին։— ստորագրեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԼԼԻ, 4, Ալպիոն Բարէյա, Պլաքֆրիարս

Մեծաբանակ և փոքրաբանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պարսկաստանի ներկայացուցչին քով
76 Մ. ԷՅՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԻ

Անգլիական Ընդհանուր Մթերանոց, Զմիրնա, պահանջանցին քով, կայսրան Թրամուէյից, 95 և 97

ՄԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՑԻՇԵՑԷՔ

Եթէ կ'ուզէք ընտիր և լաւ տեսակէ ապրանքներ ունենալ, դիմեցէք ի վաճառատունն

ԷՅՄ ԿՈՆ ԳԱՐՈՒԱՆԻ
(Հիմնեալ 1834ին)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱԼԱԲԱՅՑՆ ՄԹԵՐԱՆՈՑՆ ի մայրաքաղաքիս, որ ինքնայ չափաւոր գնեալով առատակարգ ապրանքներ միայն կը վաճառէ։

Ամէն տեսակ ապրանքներ կ'ստացուին հան, բնաբեր, ԲԷ, կոլոֆ, պանիր, պաքսիմա, ֆարիքոլոր, ֆլիպ, ոչեիլեց ըմպելիք, հոսուածոց ալ-ԲԷ, դրեպեր, ֆիգիական պարտոսոնիլ-ՆՆԵՐ, ոսոցծեալ դրեպեր, և այլն և այլն։

Պ. Գարուանա յանձն կ'առնու անմիջապէս գործարանատերաց ապապրել և գրեթէ տալ յանձնարարի մը ուզած ու և է նիւթի որ մթերանոցին մէջ չգտնուիր։

Գիտնալիք հատուն

ԷՅՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԻ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ
95 և 97, Թրաքէք Գաստրոմ, Զմիրնա, Կայսրան Թրամուէյից, Ղալաթիա-Շէշլի, Ղալաթիա։ 251

ՍԳՈՏԻ ՕՇԱՐԱԿ

(EMULSION SCOTT)
ՄԱՐԴՈՒ ՀԱՆ ՀԱՅՏԱԿԱՆ
Բ-Ֆ-ՏԻԷ ՊԸ ՀԱՐԵԼ Ե ԱՍՊԱՅՈՎ
Պատրաստեալ ձեռամբ ՍԿՈՏԻ և ՊՈՒՆԷԻ, ի Նիւ-Եորք

Գարին չափ սխարժանամ է

Մարդ. Այսն հոտ ի բոլոր յատկութիւններն զան, ինչոյ ինքնիգիներ՝ յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճուազութիւնը

Բժիշկներն ընդունեալ է, սիրած հոտ ու հոտ ունի, գիւրամարսելի, և ամենեն փափուկ ստամոքսները կը տանին զայն, զգացեալ քով։ Գործակատարք են Համիլտր և Էիրձէլ, Պոլիս։ 176